**Հավելված № 1**
«Հրազդանի էներգետիկ կազմակերպություն
(ՀրազԷԿ)» ԲԲԸ Գլխավոր տնօրենի
«25» ապրիլի 2023թ. № 15-Ա/2 հրամանի

# «ՀՐԱԶԴԱՆԻ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ (ՀրազԷԿ)» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

## ԳՆՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

Հրազդան 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


I. Ընդհանուր դրույթներ ........ 3
1. Տերմիններ և սահմանումներ ........ 3
2. Կանոնադրության նպատակը և գործողության ոլորտը ........ 4
3. Նորմատիվ հղումներ ........ 5
4. Գնումներին մասնակցելու իրավունքը և որակավորման չափանիշները ........ 5
5. Գնման առարկայի բնութագրերը ........ 6
6. Գնման ընթացակարգի արձանագրությունը և հաշվետվությունները ........ 7
7. Գնման գործընթացի պատասխանատուները ........ 8
8. Գնում կատարելու ընթացակարգերը և կիրառման պայմանները ........ 9
II. Էլեկտրոնային աճուրդ ........ 10
9. Ընդհանուր դրույթներ ........ 10
10. Անցկացման կարգը ........ 12
11. Արդյունքների ամփոփումը ........ 13
III. Պարզեցված ընթացակարգ ........ 15
12. Ընդհանուր դրույթներ ........ 15
IV. Գնանշման հարցում ........ 16
13. Ընդհանուր դրույթներ. ........ 16
V. Մեկ անձից գնումներ ........ 16
14. Ընդհանուր դրույթներ. ........ 16
VI. Մրցույթ ........ 16
15. Մրցույթի անցկացման կարգը ........ 16
16. Գնման գործընթացի նախապատրաստում ........ 20
17. Հանձնաժողով ........ 21
18. Մրցութային փաստաթղթերի բովանդակությունը ........ 23
19. Անցկացման կարգը ........ 30
20. Հայտերի ներկայացում ........ 32
21. Հայտերի բացումը ........ 32
22. Հայտերի գնահատում ........ 35
23. Պայմանագրի կնքում ........ 37
24. Պայմանագրի գինը ........ 39
VII. Չկայացած գնումներ ........ 40
25. Ընդհանուր դրույթներ . ........ 40
VIII. Խորհրդատվական ծառայություններ ձեռք բերելու առանձնահատկությունները ........ 41
26. Ընդհանուր դրութներ ........ 41
IX. Գնումների գործընթացի բողոքարկումը ........ 41
27. Ընդհանուր դրույթներ. ........ 41
Հավելված № 1 ........ 43
Հավելված № 2 ........ 44
Հավելված № 3 ........ 45
Հավելված № 4 ........ 46
Հավելված № 5 ........ 47
Հավելված № 6 ........ 48

I. Ընդհանուր դրույթներ

1. Տերմիններ և սահմանումներ

1.1. գնման առարկա՝ գնվող ապրանք, աշխատանք կամ ծառայություն.

1.2. գնման առարկայի բնութագիր՝ գնման առարկայի հատկանիշներ, դրանց ձեռքբերման և վճարման պայմաններ.

1.3. գնման գին՝ ապրանքը, աշխատանքը, ծառայությունը ձեռք բերելու համար սահմանած կարգով հաշվարկված նախահաշվային գին.

1.4. գնման գործընթաց՝ գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն, ներառյալ՝ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը.

1.5. գնում՝ պատվիրատուի հատուցմամբ՝ ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքելու միջոցով բոլոր տեսակի ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում.

1.6. գնումների բազային միավոր՝ մեկ միլիոն Հայաստանի Հանրապետության դրամ.

1.7. էլեկտրոնային աճուրդ՝ էլեկտրոնային միջոցների օգտագործմամբ նոր՝ նվազեցված գների ներկայացման գործընթաց, որը հնարավորություն է տալիս ավտոմատ գնահատման մեթոդներով (միջոցներով) որոշել հայտեր ներկայացրած մասնակիցների զբաղեցրած տեղերը՝ հաջորդականությունը.

1.8. էլեկտրոնային միջոցներ՝ մալուխային, ռադիո, օպտիկական միջոցներով կամ էլեկտրամագնիսական այլ միջոցներով փոխանցված, տեղափոխված և ստացված տվյալների մշակման ու պահպանման, ինչպես նաև էլեկտրոնային եղանակով գնման ընթացակարգերի կազմակերպման համար անհրաժեշտ էլեկտրոնային, այդ թվում՝ ծրագրային և ապարատային միջոցներ.

1.9. ընտրված խորհրդատու՝ խորհրդատու (խորհրդատուներ), որին (որոնց) պատվիրատուն առաջարկում է կնքել խորհրդատվական ծառայությունների պայմանագիր.

1.10. ընտրված մասնակից՝ մասնակից (մասնակիցներ), որին (որոնց) պատվիրատուն առաջարկում է կնքել պայմանագիր.

1.11. լիազորված մարմին՝ պետական ֆինանսների կառավարման բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող՝ Հայաստանի Հանրապետության գործադիր իշխանության պետական մարմին.

1.12. Խորհրդատվական ծառայություններ՝ ծառայություններ, որոնց մատուցման արդյունքում ստեղծվում են ոչ նյութական՝ ֆիզիկական հիմքից զուրկ ակտիվներ (արժեքներ).

1.13. խորհրդատու՝ պատվիրատուի հետ խորհրդատվական ծառայությունների պայմանագիր կնքելու նպատակով գնումների գործընթացին մասնակցող անձ.

1.14. Կոմիտե՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե.

1.15. հատուկ կամ բացառիկ իրավունք՝ իրավունք, որը բխում է իրավական կամ վարչական ակտով իրավասու մարմնի տրամադրած իրավասություններից, որի նպատակն է որոշակի գործունեության իրականացման իրավունքը (ներառյալ՝ հանրային ծառայությունների ոլորտում) վերապահել մեկ կամ սահմանափակ թվով կազմակերպությունների, և որով էապես սահմանափակվում է նման գործունեություն իրականացնելու այլ կազմակերպությունների հնարավորությունը.

1.16. հայտ՝ հրավերի հիման վրա մասնակցի կողմից ներկայացվող առաջարկ.

1.17. հայտի ապահովում՝ մասնակցի կողմից հայտով ստանձնած պարտավորությունների կատարումն ապահովող միջոց, որի չափը հավասար է հայտով առաջարկվող գնի մինչև հինգ տոկոսին: Մասնակիցը վճարում է հայտի ապահովումը, եթե նա՝

- հայտարարվել է ընտրված մասնակից, սակայն հրաժարվում կամ զրկվում է պայմանագիր կնքելու իրավունքից.
- խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը.
- հայտերի բացումից հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

1.18. Հանձնաժողով՝ Պատվիրատուի ղեկավարի հրամանով ձևավորվող գնահատող հանձնաժողով

1.19. ՀԾԿՀ՝ Հայաստանի հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով:

1.20. հրավեր՝ պայմանագիր կնքելու նպատակով պատվիրատուի կողմից մասնակցին առաջարկվող պայմաններ.

1.21. մասնակից՝ պատվիրատուի հետ պայմանագիր կնքելու նպատակով գնումների գործընթացին մասնակցող անձ.

1.22. պայմանագիր՝ գնում կատարելու նպատակով պատվիրատուի կողմից կնքվող գրավոր գործարք.

1.23. պայմանագրի ապահովում՝ սույն Կանոնադրությամբ նախատեսված դեպքերում ընտրված մասնակցի կողմից պայմանագրով ստանձնվող պարտավորությունների կատարումն ապահովող միջոց.

1.24. պատվիրատու՝ «Հրազդանի էներգետիկ կազմակերպություն (ՀրազՋԷԿ)» բաց բաժնետիրական ընկերություն:

1.25. տեղեկագիր՝ Օրենքով նախատեսված հրատարակման ենթակա տեղեկատվության հրապարակման նպատակով www.procurement.am (կամ www.gnumner.am) հասցեով գործող ինտերնետային կայք.

1.26. Օրենք՝ Գնումների մասին ՀՀ օրենքը.

1.27. Վերասակարկություն՝ Վերասակարկությունը ուղղված գնման Մասնակիցների գնմանը մասնակցելու իրենց հայտերում նշված գների կամավոր իջեցմանը՝ Պատվիրատուի համար գնման մասնակցության հայտի նախընտրելիությունը բարձրացնելու նպատակով: Ընդ որում «բերված գին» կամ «տնօրինման արժեք» չափորոշիչների կիրառմամբ գնման մասնակցության հայտերի գնահատման պարագայում գնման Մասնակիցը իրավունք ունի բարելավել նշված չափորոշիչները կազմող յուրաքանչյուր ցուցանիշ:

## 2. Կանոնադրության նպատակը և գործողության ոլորտը

2.1. Սույն Կանոնադրության նպատակն է Պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ ապրանքների, աշխատանքների և ծառայությունների տնտեսող, արդյունավետ ու օգտավետ ձեռքբերման իրականացումը՝ համարժեք հատուցմամբ:

2.2. Պատվիրատուն իր նպատակների իրականացման գործընթացում հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա՝

2.1.1. գնման գործընթացի միասնական կանոններով, մրցակցային, թափանցիկ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2.1.2. պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

2.1.3. ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական, իրավաբանական կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն.

2.1.4. գնումը համարվում է Հայաստանի Հանրապետությունից դուրս կատարվող, եթե պայմանագիրը կնքվում և դրա շրջանակում պայմանագրի առարկան ձեռք է բերվում ու օգտագործվում Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս.

2.3. Եթե ՀՀ կողմից վավերացված միջազգային պայմանագրերում սահմանվում են այլ նորմեր, քան նշված են սույն Կանոնադրությունում, ապա կիրառվում են այդ նորմերը.

2.4. Լիազորված մարմինը հաստատում է՝

2.4.1. գնումների գործընթացում օգտագործվող փաստաթղթերի, ներառյալ հրավերի և պայմանագրի օրինակելի ձևերը.

2.4.2. լիազորված մարմին ներկայացվող փաստաթղթերի, ներառյալ հաշվետվությունների ձևերը և դրանց ներկայացման ժամկետները.

2.4.3. հաստատում է գրանցամատյանի ձևը և վարման կարգը:

3. **Նորմատիվ հղումներ**

Գնումների իրականացման գործընթացում Ընկերությունը ղեկավարվում է.

3.1. Օրենքով,

3.2. ՀԾԿՀ 2020թ. օգոստոսի 19-ի № 273Ա որոշմամբ,

Այն դեպքում, եթե սույն կանոնադրության դրույթները հակասում են 3.1 և 3.2. կետերում նշված նորմատիվ իրավական ակտերին, Պատվիրատուն առաջնորդվում է նորմատիվ իրավական ակտերի դրույթներով:

4. **Գնումներին մասնակցելու իրավունքը և որակավորման չափանիշները**

4.1. Մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշները: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝

4.1.1. մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը (Հավելված 1).

4.1.2. մասնագիտական փորձառություն (Հավելված 2).

4.1.3. տեխնիկական միջոցներ (Հավելված 3).

4.1.4. ֆինանսական միջոցներ (հավելված 4)

4.1.5. աշխատանքային ռեսուրսներ (Հավելված 5):

4.2. Չեն կարող սահմանվել մասնակցի՝ գնումներին մասնակցելու իրավունքի և որակավորման հետ կապված այնպիսի չափանիշներ, որոնք՝

4.2.1. խտրական են և սահմանափակում են մրցակցությունը՝ անհիմն կերպով բարդացնում կամ պարզեցնում են հնարավոր մասնակցությունը գնման գործընթացին.

4.2.2. համարժեք չեն՝ ուղղակիորեն չեն բխում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման անհրաժեշտությունից:

4.3. Բացառությամբ Օրենքով նախատեսված գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝

4.3.1. որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ դատական կարգով ճանաչվել են սնանկ,

4.3.2. որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ Կոմիտեի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ,

4.3.3. որոնք կամ որոնց գործադիր մարմնի ներկայացուցիչը հայտը ներկայացնելու օրվան նախորդող երեք տարիների ընթացքում դատապարտված է եղել ահաբեկչության ֆինանսավորման, երեխայի շահագործման կամ մարդկային թրաֆիքինգ ներառող հանցագործության, հանցավոր համագործակցություն ստեղծելու կամ դրան մասնակցելու, կաշառք ստանալու, կաշառք տալու կամ կաշառքի միջնորդության և օրենքով նախատեսված տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դատվածությունը օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված է,

4.3.4. որոնց վերաբերյալ հայտը ներկայացվելու օրվան նախորդող մեկ տարվա ընթացքում առկա է օրենքով սահմանված կարգով կայացված անբողոքարկելի վարչական ակտ՝ գնումների ոլորտում հակամրցակցային համաձայնության կամ գերիշխող դիրքի չարաշահման համար,

4.3.5. որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են Եվրասիական տնտեսական միությանն անդամակցող երկրների գնումների մասին օրենսդրության համաձայն հրապարակված գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում,

4.3.6. որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

- խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,
- որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,
- հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Սույն կետում նշված ցուցակը, այդ թվում՝ ռուսերեն, հրապարակում է լիազորված մարմինը:

## 5. Գնման առարկայի բնութագրերը

5.1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

5.2. Գնման առարկայի բնութագրերը՝

5.2.1. պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար,

5.2.2. չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը,

5.2.3. պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը,

5.2.4. ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

5.3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

5.4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել գնման առարկան:

5.5. Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

## 6. Գնման ընթացակարգի արձանագրությունը և հաշվետվությունները

6.1. Եթե գնման գինը գերազանցում է գնումների բազային միավորը, ապա պայմանագիրը կնքվելուն կամ գնման ընթացակարգը չկայացած հայտարարելուն հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն կազմում է գնման ընթացակարգի արձանագրություն: Գնման ընթացակարգի արձանագրությունը գնման ձևին համապատասխան պարունակում է՝

6.1.1. պատվիրատուի անվանումը, գտնվելու վայրը,

6.1.2. գնման անհրաժեշտությունը և գնման ձևի ընտրության հիմնավորումը,

6.1.3. հրավերը և դրանում կատարված փոփոխությունները,

6.1.4. գնման վերաբերյալ ստացված հարցումները և ներկայացված պարզաբանումները,

6.1.5. հայտեր ներկայացրած մասնակիցների տվյալները՝ անվանումը, գտնվելու կամ բնակության վայրը, կապի միջոցները,

6.1.6. հայտերով ներկայացված գները,

6.1.7. հայտերի գնահատման կարգը և դրանց գնահատման արդյունքները,

6.1.8. հայտի մերժման դեպքում՝ դրա հիմնավորումը,

6.1.9. պայմանագիրը, իսկ գնման գործընթացի արդյունքում պայմանագիր չկնքվելու դեպքում՝ դրա հիմնավորումը,

6.1.10. գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ հայտնաբերվելու դեպքում դրանց և այդ կապակցությամբ ձեռնարկված գործողությունների համառոտ նկարագիրը,

6.1.11. գնման գործընթացի վերաբերյալ ներկայացված բողոքները և դրանց վերաբերյալ կայացված որոշումները,

6.1.12. այլ անհրաժեշտ տեղեկություններ:

6.2. Եթե գնման գինը չի գերազանցում գնումների բազային միավորը, ապա պատվիրատուն ապահովում է գնման նպատակով կատարված գործողությունների և դրանց հիմքերի մասին համապատասխան փաստաթղթերի (կամ էլեկտրոնային փաստաթղթերի) առկայությունը և դրանց պահպանումը:

6.3. Պատվիրատուն պարտավոր է գնման ընթացակարգի արձանագրության կամ դրա մաս կազմող փաստաթղթի պատճենը, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների, տրամադրել ցանկացած անձի՝ վերջինիս կողմից նման պահանջ ստանալուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

7. **Գնման գործընթացի պատասխանատուները**

7.1. Յուրաքանչյուր գնման գործընթացի համար պատասխանատու են պատվիրատուի ղեկավարը, ինչպես նաև իրենց վերապահված իրավասությունների մասով՝

7.2. Պատվիրատուի ղեկավարը՝

7.2.1. նշանակում է՝

a. գնումները համակարգող,

b. պատասխանատու ստորաբաժանում,

c. Հանձնաժողով՝ բացառությամբ սույն Կանոնադրությամբ նախատեսված դեպքերի.

7.2.2. բացառությամբ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի՝

a. կնքում է պայմանագիրը,

b. հաստատում է գնման ընթացակարգի արձանագրությունը:

7.3. Գնումները համակարգողը՝

7.3.1. պատասխանատու է պատվիրատուի՝ գնումների գործընթացի կազմակերպման և համակարգման համար,

7.3.2. եզրակացություն է տալիս գնումների շրջանակներում պատվիրատուի հաստատած փաստաթղթերի վերաբերյալ, ապահովում է գնման ընթացակարգի և դրան առնչվող փաստաթղթերի համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պայմաններին,

7.3.3. իրականացնում է Հանձնաժողովի քարտուղարի լիազորությունները,

7.3.4. կազմում և պատվիրատուի ղեկավարի հաստատմանն է ներկայացնում տվյալ գնման ընթացակարգի արձանագրությունը և պայմանագիրը:

7.4. Պատասխանատու ստորաբաժանումը՝

7.4.1. կազմում և հաստատում է գնման հայտը,

7.4.2. հետևում է պայմանագրի կողմի (կապալառու, մատակարար և այլն)՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարման գործընթացին և դրա արդյունքներով պատվիրատուի ղեկավարին ներկայացնում է առաջարկություններ՝ պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ կիրառելու ուղղությամբ,

7.4.3. ընդունում է պայմանագրի կատարման արդյունքը,

7.4.4. ներկայացնում է այն անձի (անձանց) թեկնածությունը, որն առաջադրվում է Հանձնաժողովի կազմում ընդգրկվելու նպատակով,

7.4.5. անհրաժեշտության դեպքում առաջարկ է ներկայացնում գնումների պլանում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:

Պատասխանատու ստորաբաժանում կարող են սահմանվել պատվիրատուի՝

a. համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումը,
b. ձևավորած մասնագիտական խումբը, որի կազմում կարող են նաև ընդգրկվել այլ մարմինների կամ կազմակերպությունների ներկայացուցիչներ,
c. պաշտոնատար անձը, եթե տվյալ պատվիրատուն չունի համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումներ:

Պատասխանատու ստորաբաժանման լիազորությունները չեն կարող վերապահվել գնումները համակարգողին:

Պատասխանատու ստորաբաժանման՝ գնման հայտի նախագծմանը մասնակցող անձը (անձինք) պետք է ունենա (ունենան) գնման առարկան բնութագրելու մասնագիտական կարողություն, ինչը որոշվում է՝ ելնելով գնման առարկայի տեսակից:

7.5. Հանձնաժողովը՝

7.5.1. հաստատում է գնումների կամ նախաորակավորման հայտարարության և հրավերի տեքստերը՝ բացառությամբ փակ պարբերական մրցույթի նախաորակավորման հայտարարության,

7.5.2. փոփոխություններ է կատարում գնումների հայտարարության և հրավերի կամ նախաորակավորման հայտարարության տեքստերում,

7.5.3. պարզաբանումներ է ներկայացնում գնման ընթացակարգի վերաբերյալ,

7.5.4. բացում և գնահատում է հայտերը,

7.5.5. որոշում է գնման ընթացակարգի հաղթողին (հաղթողներին),

7.5.6. գնման ընթացակարգը հայտարարում է չկայացած:

7.6. Հանձնաժողովի կազմում Հանձնաժողովի անդամի կարգավիճակով չեն կարող ընդգրկվել գնումները համակարգողը, ինչպես նաև վերջինիս ներկայացուցիչը կամ աշխատողը: Հանձնաժողովի անդամը պետք է ունենա մասնակիցների որակավորումը և առաջարկները գնահատելու համար պահանջվող մասնագիտական կարողություն, ինչը որոշվում է գնման առարկային համապատասխան: Ընդ որում, եթե պատվիրատուի աշխատակազմի ներկայացուցիչները չունեն անհրաժեշտ մասնագիտական կարողություններ, ապա Հանձնաժողովի կազմում ներառելու նպատակով հրավիրվում է համապատասխան փորձագետ (մասնագետ):

## 8. Գնում կատարելու ընթացակարգերը և կիրառման պայմանները

8.1. Գնում կատարելու ընթացակարգերը.

8.1.1. Սույն Կանոնադրությամբ նախատեսված են գնումների հետևյալ եղանակները՝

a. էլեկտրոնային աճուրդ,
b. մրցույթ,
c. պարզեցված ընթացակարգ,
d. գնանշման հարցում,
e. մեկ անձից գնում:

8.2. Էլեկտրոնային աճուրդ.

8.2.1. Գնումն իրականացվում է էլեկտրոնային աճուրդի ընթացակարգով, եթե գնման առարկան ներառված է ՀՀ Կառավարության կողմից հաստատված Էլեկտրոնային աճուրդի միջոցով ձեռք բերվող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ցուցակում:

8.3. Մրցույթ.

8.3.1. Մրցույթը կարող է լինել բաց կամ փակ:

8.3.2. Կախված փուլերի քանակից՝ մրցույթը կարող է անցկացվել մեկ կամ երկու փուլով:

8.3.3. Կախված նախնական որակավորման ընտրության ընթացակարգերի առկայությունից մրցույթը կարող է անցկացվել նախաորակավորման ընթացակարգով կամ առանց դրա:

8.4. Պարզեցված ընթացակարգ.

8.4.1. Գնումների պարզեցված ընթացակարգը կիրառվում է Ընկերության կարիքների համար ապրանքների, աշխատանքների ծառայությունների արժեքների որոշման նպատակով շուկայի ուսումնասիրության հիման վրա: Ընթացակարգի հաղթող է ճանաչվում սահմանված չափորոշիչներին համապատասխան և լավագույն առաջարկ ներկայացրած Մասնակիցը:

8.4.2. Գնումների պարզեցված ընթացակարգը կարող է կիրառվել հետևյալ արժողության ապրանքների, աշխատանքների, ծառայությունների գնման ժամանակ.

8.5. Գնանշման հարցում.

8.5.1. Գնումը կարող է կատարվել գնանշման հարցման ձևով, եթե գնման գինը չի գերազանցում գնումների բազային միավորի յոթանասունապատիկը, և գնման առարկան ներառված չէ՝

- էլեկտրոնային աճուրդի միջոցով ձեռք բերվող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ցուցակում,
- փակ պարբերական մրցույթով ձեռք բերվող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ցուցակում:

8.5.2. Պետական գաղտնիք պարունակող գնումները գնանշման հարցման ձևով իրականացվելու դեպքում կազմակերպվում է նախաորակավորման ընթացակարգ: Նախաորակավորման ընթացակարգին մասնակցելու իրավունք ունի ցանկացած մասնակից: Հայտ կարող են ներկայացնել պատվիրատուից հրավեր ստացած նախաորակավորված մասնակիցները:

8.5.3. Գնանշման հարցման ընթացակարգի կիրառման դեպքում հայտերի ներկայացման համար նախատեսվող ժամկետն առնվազն չորս աշխատանքային օր է, որը հաշվարկվում է տեղեկագրում գնումների հայտարարության և հրավերի հրապարակման, իսկ պետական գաղտնիք պարունակող գնումների դեպքում՝ հրավերը նախաորակավորված մասնակիցներին տրամադրելու օրվանից:

8.6. Մեկ անձից գնումներ.

8.6.1. Սույն Կանոնակարգությամբ և Օրենքով նախատեսված դեպքերում մեկ անձից գնումը կարող է անցկացվել կոնկրետ մատակարարին պայմանագիր կնքելու առաջարկություն ուղարկելու միջոցով կամ մեկ մատակարարից պայմանագիր կնքելու առաջարկության ընդունմամբ, առանց մրցակցող առաջարկների ուսումնասիրության:

## II. Էլեկտրոնային աճուրդ

### 9. Ընդհանուր դրույթներ

9.1. Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու համար հայտերի ներկայացման վերջնաժամկետը սահմանվում է առնվազն 15 (տասնհինգ) օրացուցային օր՝ հայտարարությունը և հրավերը տեղեկագրում հրապարակելու օրվանից: Եթե գնման գինը չի գերազանցում գնումների բազային միավորի յոթանասունապատիկը, ապա հայտերի ներկայացման համար սույն կետով նախատեսված ժամկետը սահմանվում է առնվազն յոթ օրացուցային օր:

9.2. Էլեկտրոնային աճուրդը հիմնվում է բացառապես գների վրա:

9.3. Էլեկտրոնային աճուրդով գնումների կատարման ժամանակ գործում են հետևյալ առանձնահատկությունները՝

a. գնման հայտարարությունը և հրավերը միաժամանակ հրապարակվում են տեղեկագրում,

b. գնման հայտով և հրավերով պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրվեն աճուրդի միջոցով ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության բնութագրերը, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը,

c. հրավերով սահմանվում են աճուրդին մասնակցության և ընթացակարգի անցկացման հետ կապված պայմանները,

d. առաջին տեղը զբաղեցրած Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ մասնակիցը հրավերով նախատեսված՝ իր կողմից հաստատվող փաստաթղթերը, բացառությամբ հայտի ապահովման, ներկայացնում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, որի արտատպումը պետք է տեսանելի լինի փաստաթղթի վրա, իսկ հավաստագիրը՝ զետեղված «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրամադրված նույնականացման քարտում: Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցը սույն կետով նախատեսված փաստաթղթերը ներկայացնում է իր կողմից հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով՝ բացառությամբ հայտի ապահովման:

9.4. Էլեկտրոնային աճուրդի կիրառման դեպքում հրավերը ներառում է հետևյալ պայմանները.

- ներկայացվելիք առաջարկների սահմանափակումները, որոնք բխում են գնման առարկայի բնութագրից,
- էլեկտրոնային աճուրդի ընթացքում մասնակիցներին տրամադրվելիք տեղեկությունները և այդ տեղեկությունները նրանց տրամադրելու պայմանները,
- էլեկտրոնային աճուրդի գործընթացին վերաբերող էական նշանակության տեղեկությունները,
- մասնակիցների կողմից հայտեր ներկայացնելու պայմանները: Ընդ որում, մասնակիցը գնումներին մասնակցելու իր իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորելու համար հայտով ներկայացնում է իր հաստատած հայտարարությունը, պայմանով, որ մասնակիցը պարտավորվում է Օրենքով նախատեսված դեպքերում և կարգով ներկայացնել հայտարարությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները),
- տեղեկություններ՝ օգտագործվող էլեկտրոնային սարքավորումների մասին և կապ հաստատելու պայմաններն ու տեխնիկական բնութագրերը:

9.5. Հրավերով նախատեսվում են նաև, որ՝

a. մասնակցի հայտը ներառում է միայն գնային առաջարկը: Ընդ որում, մասնակիցը գնային առաջարկ կարող է ներկայացնել, եթե բավարարում է հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշների պահանջները: Գնային առաջարկը ներկայացնելը համարվում է սույն ենթակետով նախատեսված պահանջներին մասնակցի տվյալների համապատասխանությունը հավաստող հայտարարություն:

b. Աճուրդի ընդհանուր տևողությունը սահմանվում է 120 րոպե: Աճուրդի ընթացքում կատարվող յուրաքանչյուր քայլի արդյունքում նվազեցվող գումարը չպետք է պակաս լինի աճուրդն սկսելու պահին ներկայացված նվազագույն գնային առաջարկի մեկ տոկոսից: Եթե աճուրդի ընդհանուր տևողության ընթացքում որևէ քայլ կատարելու պահից հաշված 10-րդ րոպեն լրանալը չի կատարվում նոր քայլ, ապա աճուրդը համարվում է ամփոփված, և վերջին քայլը կատարած մասնակիցը համարվում է առաջին տեղը զբաղեցրած մասնակից:

c. Առաջին տեղ զբաղեցրած ճանաչված մասնակիցը հրավերով սահմանված՝ որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի հետ միասին ներկայացնում է նաև՝

i. ապրանքների գնման դեպքում՝ իր կողմից հաստատված առաջարկվող ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագրերը,

ii. իր կողմից հաստատված հայտարարություն տվյալ ընթացակարգի շրջանակում գերիշխող դիրքի չարաշահման և հակամրցակցային համաձայնության բացակայության մասին,

iii. իր կողմից հաստատված հայտարարություն տվյալ գնման գործընթացում իր, գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված փոխկապակցված անձանց միաժամանակյա մասնակցության բացակայության մասին,

iv. այն ֆիզիկական անձի (անձանց) տվյալները, ով (ովքեր) ուղղակի կամ անուղղակի ունի (ունեն) մասնակցի կանոնադրական կապիտալում քվեարկող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) ավելի քան տասը տոկոսը, ներառյալ ըստ ներկայացնողի բաժնետոմսերը, այն անձի (անձանց) տվյալները, ով (ովքեր) իրավունք ունի (ունեն) նշանակելու կամ ազատելու մասնակցի գործադիր մարմնի անդամներին, կամ ստանում է մասնակցի կողմից իրականացվող ձեռնարկատիրական կամ այլ գործունեության արդյունքում ստացված շահույթի տասնհինգ տոկոսից ավելին: Սույն ենթակետի մեջ նշված անձանց բացակայության դեպքում ներկայացվում են գործադիր մարմնի ղեկավարի և անդամների տվյալները: Ընդ որում, եթե մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից, ապա սույն ենթակետով նախատեսված տեղեկատվությունը պայմանագիր կնքելու վերաբերյալ որոշման մասին հայտարարության հետ միաժամանակ հրապարակվում է տեղեկագրում,

v. հրավերով նախատեսված հայտի ապահովման բնօրինակը՝ Հանձնաժողովին ուղղված կից գրությամբ, որը մուտքագրվում է նաև պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգ: Եթե հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի ձևով, ապա այն չի հաստատվում մասնակցի կողմից, և սույն ենթակետով նախատեսված գրությամբ ներկայացվում է բանկի կողմից տրված երաշխիքի բնօրինակը:

9.6. Հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց ոչ ուշ, քան երկու օրացուցային օր առաջ հրավերում կարող են կատարվել փոփոխություններ, որոնք նույն օրը հրապարակվում են տեղեկագրում: Այդ դեպքում հայտերի ներկայացման վերջնաժամկետը հաշվարկվում է այդ փոփոխությունների մասին տեղեկագրում հրապարակելու օրից:

9.7. Մասնակիցն իրավունք ունի հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն երեք օրացուցային օր առաջ պահանջելու հրավերի պարզաբանում: Հարցումը կատարած մասնակցին պարզաբանումը տրամադրվում է հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու օրացուցային օրվա ընթացքում:

9.8. Հարցման և պարզաբանումների բովանդակության մասին հայտարարությունը հրապարակվում է տեղեկագրում՝ հարցումը կատարած մասնակցին պարզաբանումը տրամադրելու օրը, առանց նշելու հարցումը կատարած մասնակցի տվյալները:

10. Անցկացման կարգը

10.1. Էլեկտրոնային աճուրդը կարող է կայանալ մի շարք հաջորդական փուլերով:

10.2. Էլեկտրոնային աճուրդը սկսվում է ոչ շուտ, քան դրա մասին պահանջը ուղարկվելու օրվան հաջորդող օրվանից երկու օրացուցային օր անց:

10.3. Էլեկտրոնային աճուրդը չի կարող կազմակերպվել ժամը 16:00-ից հետո և ոչ աշխատանքային օրերին: Եթե էլեկտրոնային աճուրդը սկսելու օրը համընկնում է ոչ աշխատանքային օրվա հետ, ապա էլեկտրոնային աճուրդը վերահայտարարված է համարվում տվյալ ոչ աշխատանքային օրվան հաջորդող աշխատանքային օրվա նույն ժամին:

10.4. Էլեկտրոնային աճուրդի յուրաքանչյուր փուլում պատվիրատուն անհապաղ (առցանց) մասնակիցներին է տրամադրում նվազագույն բավարար տեղեկություններ, որոնք նրանց հնարավորություն են տալիս ցանկացած պահի ճշտել իրենց զբաղեցրած հարաբերական տեղը:

10.5. Հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցներին ուղարկվում է էլեկտրոնային ձևով նոր (վերանայված) գներ ներկայացնելու առաջարկություն: Առաջարկությունը ներառում է նաև տեղեկություններ էլեկտրոնային աճուրդի բացման օրվա ու ժամի և օգտագործվող էլեկտրոնային սարքավորումների հետ անհատական կապուղի հաստատելու համար անհրաժեշտ տվյալների մասին:

10.6. Մինչև աճուրդի ամփոփման համար հրավերով սահմանված ժամկետը լրանալը՝ համակարգն ավտոմատ եղանակով մասնակիցներին ներկայացնում է յուրաքանչյուր մասնակցի քայլը և այն կատարելու օրը, ժամը:

10.7. Էլեկտրոնային աճուրդի փուլերի իրականացման ընթացքում պատվիրատուն չի հրապարակում գներ ներկայացրած մասնակիցների ինքնությունը:

11. Արդյունքների ամփոփումը

11.1. Էլեկտրոնային աճուրդը ամփոփվում (փակվում) է հետևյալ պայմաններից մեկի կամ դրանց համատեղ առկայության դեպքում.

a. հրավերում նշված կոնկրետ պահի,

b. սպառվել է աճուրդին մասնակցելու հրավերում նշված աճուրդի փուլերի քանակը,

c. նոր գներ այլևս չեն ներկայացվել: Այդ դեպքում աճուրդին մասնակցելու հրավերում պատվիրատուն նշում է վերջին առաջարկությունն ստանալուց մինչև էլեկտրոնային աճուրդի փակումն ընկած թույլատրելի ժամանակահատվածը:

11.2. Պատվիրատուն, Օրենքով սահմանված կարգով, պայմանագիրը կնքում է էլեկտրոնային աճուրդի արդյունքների հիման վրա՝ ընտրված մասնակցի հետ:

11.3. Աճուրդն ամփոփվում է հրավերում նշված կոնկրետ ժամը լրանալու դրությամբ կամ 9.5 կետի a ենթակետով նախատեսված դեպքում:

11.4. Աճուրդն ամփոփվելու պահի դրությամբ համակարգն ավտոմատ եղանակով պատվիրատուին և հայտեր ներկայացրած մասնակիցներին ներկայացնում է աճուրդի արդյունքները՝ ըստ առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների անվանումների և զբաղեցրած տեղերի:

11.5. Աճուրդն ամփոփվելու պահին, եթե մասնակիցների ներկայացրած գները գերազանցում են տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների համար գնման հայտով սահմանված գինը, գնման ընթացակարգը, սույն Կանոնադրության 25.1.1 ենթակետի հիման վրա, հայտարարվում է չկայացած:

11.6. Աճուրդն ամփոփվելուն հաջորդող աշխատանքային օրը՝

a. Հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցով ներկայացված գնային առաջարկներն աճուրդն ամփոփվելու պահի դրությամբ գերազանցում են ընթացակարգի արդյունքում գնվելիք ապրանքի, աշխատանքի կամ ծառայության ձեռքբերման համար գնման հայտով սահմանված գինը:

b. Հանձնաժողովի քարտուղարն աճուրդի արդյունքների ամփոփման նպատակով հրավիրված նիստի արձանագրության, ինչպես նաև տվյալ նիստին ներկա Հանձնաժողովի անդամների կողմից ստորագրված շահերի բախման բացակայության մասին հայտարարությունների բնօրինակներից արտատպված (սկանավորված) տարբերակները հրապարակում է տեղեկագրում:

c. Հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային փոստի միջոցով Կոմիտե է ներկայացնում հարցում առաջին տեղը զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ Կոմիտեի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով սահմանված «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

d. Հանձնաժողովի քարտուղարը համակարգի միջոցով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից հաշված երեք աշխատանքային օրվա ընթացքում համակարգի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերի, ինչպես նաև սույն Կանոնադրության 9.5 կետի c ենթակետով նախատեսված փաստաթղթերը:

e. Սույն Կանոնադրության 11.6 կետի d ենթակետով նախատեսված փաստաթղթերը չներկայացվելու դեպքում Հանձնաժողովը հայտերի գնահատման նպատակով հրավիրված նիստում մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

11.7. Կոմիտեն սույն Կանոնադրության 11.6 կետի c ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից հաշված երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում Կոմիտեից տեղեկատվություն չստացվելու դեպքում առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը համարվում է այդ պահանջները բավարարող: Եթե Կոմիտեի կողմից սույն կետով սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ Կոմիտեի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով սահմանված «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է, իսկ պայմանագիրը կնքված լինելու դեպքում կիրառվում են գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջները: Եթե սահմանված ժամկետում Կոմիտեի կողմից տրամադրված տեղեկատվության արդյունքում արձանագրվում է, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը Կոմիտեի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ, ապա հայտերի գնահատման նպատակով հրավիրված նիստում Հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից Կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող լրացուցիչ տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

11.8. Սույն Կանոնադրության 11.6 կետով սահմանված ժամկետի ավարտին հաջորդող աշխատանքային օրը քարտուղարն էլեկտրոնային եղանակով Հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները, գնահատման թերթիկների երկուական օրինակ և Կոմիտեից ստացված տեղեկատվությունը: Հայտերի գնահատման արդյունքների հաստատման նպատակով նիստը հրավիրվում է ոչ ուշ, քան փաստաթղթերը Հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Ընդ որում, ապրանքների գնման դեպքում Հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերով սահմանված տեխնիկական բնութագրերի պահանջներին, իսկ անհամապատասխանություն արձանագրելու դեպքում Հանձնաժողովի նիստի

արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

11.9. Առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն Կանոնադրության 9.5 կետի c ենթակետի i պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում քարտուղարը նույն օրը համակարգի միջոցով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

11.10. Արձանագրված անհամապատասխանությունն առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից սահմանված ժամկետում,

a. շտկվելու դեպքում հայտը գնահատվում է բավարար, և առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից

b. չշտկվելու դեպքում Հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

11.11. Ընտրված մասնակցի կողմից պայմանագիր չկնքելու (հրաժարվելու) կամ պայմանագիր կնքելու իրավունքից զրկվելու դեպքում Հանձնաժողովն ընտրված մասնակցի որոշման նպատակով կիրառում է սույն Կանոնադրության 11.6-11.10 կետերով նախատեսված պայմանները:

11.12. Էլեկտրոնային աճուրդի արդյունքների հիման վրա ընտրված մասնակցի հետ պայմանագիրը կնքվում և գնման ընթացակարգի արդյունքներն ամփոփվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

## III. Պարզեցված ընթացակարգ

### 12. Ընդհանուր դրույթներ

12.1. Գնումների պարզեցված ընթացակարգը կարող է կիրառվել այն դեպքում, երբ գնման ներկայացվող ապրանքների, աշխատանքների, ծառայությունների գնման նախահաշվային արժեքը գտնվում է գնման բազային միավորից մինչև գնման բազային միավորի տասնապատիկի (10.000.000 (տասն միլիոն) ՀՀ դրամի միջակայքում (առանց ԱԱՀ),

12.2. Գնման առաջարկի մասին տեղեկատվությունը ուղարկվում է գնման մասնակցության թեկնածուներին սահմանված կարգով,

12.3. Պայմանագրի համաձայնեցումը իրականացվում է մրցակցային աղյուսակի հետ համատեղ, որտեղ՝ Մրցակցային աղյուսակը պետք է պարունակի հետևյալ տվյալները՝

a. գնման առարկան, նշելով մատակարարվող ապրանքի քանակը, կատարվող աշխատանքի կամ մատուցվող ծառայությունների ծավալը,

b. գնման սկզբնական /առավելագույն / գինը,

c. ապրանքի մատակարարման, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման վայրը,

d. այն կազմակերպությունների անվանումները, որոնց ուղարկվել է կարիքների մասին տեղեկատվությունը՝ նման կազմակերպությունների կոնտակտային տվյալների նշումով,

e. ստացված առաջարկությունների մասին տվյալները:

## IV. Գնանշման հարցում

### 13. Ընդհանուր դրույթներ.

13.1. Գնումը կարող է կատարվել գնանշման հարցման ձևով, եթե գնման գինը չի գերազանցում գնումների բազային միավորի յոթանասունապատիկը, և գնման առարկան ներառված չէ ՀՀ Կառավարության կողմից հաստատված էլեկտրոնային աճուրդի միջոցով կամ փակ պարբերական մրցույթով ձեռք բերվող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ցուցակներում:

13.2. Պետական գաղտնիք պարունակող գնումները գնանշման հարցման ձևով իրականացվելու դեպքում կազմակերպվում է նախաորակավորման ընթացակարգ: Նախաորակավորման ընթացակարգին մասնակցելու իրավունք ունի ցանկացած մասնակից: Հայտ կարող են ներկայացնել պատվիրատուից հրավեր ստացած նախաորակավորված մասնակիցները:

13.3. Գնանշման հարցման ընթացակարգի կիրառման դեպքում հայտերի ներկայացման համար նախատեսվող ժամկետն առնվազն չորս աշխատանքային օր է, որը հաշվարկվում է տեղեկագրում գնումների հայտարարության և հրավերի հրապարակման, իսկ պետական գաղտնիք պարունակող գնումների դեպքում՝ հրավերը նախաորակավորված մասնակիցներին տրամադրելու օրվանից:

## V. Մեկ անձից գնումներ

### 14. Ընդհանուր դրույթներ.

Գնումը կարող է կատարվել մեկ անձից, եթե՝

14.1. գնման ենթակա ապրանքը, աշխատանքը կամ ծառայությունը հնարավոր է ձեռք բերել միայն մեկ անձից, որը պայմանավորված է նրա հեղինակային և հարակից իրավունքներով, հատուկ կամ բացառիկ իրավունքի առկայությամբ,

14.2. արտակարգ կամ չնախատեսված այլ իրավիճակի առաջացման հետևանքով ծագել է գնման անհետաձգելի պահանջ և, արտակարգ կամ չնախատեսված այլ իրավիճակից ելնելով, գնման այլ ձևերի կիրառումը ժամկետի առումով անհնար է, պայմանով, որ նման պահանջը հնարավոր չէր օբյեկտիվորեն կանխատեսել,

14.3. պատվիրատուն, որևէ անձից կատարելով ապրանքների գնում, որոշում է սկզբնական պայմանագրում չներառված, սակայն օբյեկտիվորեն չնախատեսված հանգամանքներից ելնելով՝ սկզբնական պայմանագրի կատարման համար անհրաժեշտ դարձած ապրանքների լրացուցիչ գնում կատարել նույն անձից, պայմանով, որ՝

a. լրացուցիչ ապրանքների պայմանագիրը հնարավոր չէ տեխնիկապես կամ տնտեսապես առանձնացնել սկզբնական պայմանագրից՝ առանց պատվիրատուի համար նշանակալի դժվարություն ստեղծելու, և

b. դրա գինը չգերազանցի սկզբնական պայմանագրի ընդհանուր գնի 10 տոկոսը: Ընդ որում, միևնույն անձից սույն ենթակետի կիրառմամբ լրացուցիչ գնում կարող է կատարվել մեկ անգամ, իսկ լրացուցիչ ապրանքների գինը չի կարող սահմանվել ավելի, քան նախատեսված է պայմանագրով,

14.4. գնման գինը չի գերազանցում գնումների բազային միավորը,

14.5. գնումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս:

## VI. Մրցույթ

### 15. Մրցույթի անցկացման կարգը

15.1. Ընդհանուր դրույթներ.

15.1.1. Գնումների կատարման նախընտրելի ձևը մրցույթն է, եթե գնման առարկան ներառված չէ՝

a. էլեկտրոնային աճուրդի միջոցով ձեռք բերվող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ցուցակում,

b. փակ պարբերական մրցույթով ձեռք բերվող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ցուցակում:

15.1.2. Գնումները կարող են կատարվել գնման այլ ձևերով, միայն գնման բազային միավորի յոթանասունապատիկից չգերազանցելու դեպքերում:

15.1.3. Մրցույթի տեսակներն են՝ բաց և փակ:

15.1.4. Փակ մրցույթը լինում է նպատակային կամ պարբերական:

15.1.5. Մրցույթը կարող է կատարվել երկու փուլով Օրենքով և սույն Կանոնադրությամբ նախատեսված դեպքերում:

15.2. Բաց մրցույթի կիրառման պայմանները.

15.2.1. Բաց մրցույթի դեպքում հայտերի ներկայացման համար նախատեսվող ժամկետը հաշվարկվում է գնումների հայտարարությունը և հրավերը տեղեկագրում հրապարակելու օրվանից:

15.2.2. Հայտերի ներկայացման ժամկետը առնվազն տասն աշխատանքային օր է:

15.2.3. Եթե արտակարգ կամ չնախատեսված իրավիճակի առաջացման հետևանքով ծագել է գնման անհետաձգելի պահանջ, և հայտերի ներկայացման համար սույն կետով նախատեսված ժամկետի կիրառումն անհնար է, պայմանով, որ նման պահանջը հնարավոր չէր օբյեկտիվորեն կանխատեսել, ապա հայտերի ներկայացման համար նախատեսվող ժամկետը առնվազն տասն օրացուցային օր է:

15.3. Փակ մրցույթի կիրառման պայմանները.

15.3.1. Փակ մրցույթը կիրառվում է, եթե գնման գործընթացը պարունակում է պետական գաղտնիք,

15.3.2. Փակ մրցույթը պարբերական է, եթե գնման առարկան ձեռք է բերվում պարբերաբար, և այն ներառված է ՀՀ Կառավարության կողմից հաստատված փակ պարբերական մրցույթով ձեռք բերվող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ցուցակում.

15.3.3. Փակ մրցույթը նպատակային է, եթե գնման առարկան ներառված չէ ՀՀ Կառավարության կողմից հաստատված փակ պարբերական մրցույթով ձեռք բերվող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ցուցակում,

15.3.4. Փակ մրցույթի կիրառման դեպքում կազմակերպվում է նախաորակավորման ընթացակարգ: Նախաորակավորման ընթացակարգին մասնակցելու իրավունք ունի ցանկացած մասնակից: Հայտ կարող են ներկայացնել միայն Պատվիրատուից հրավեր ստացած նախաորակավորված մասնակիցները,

15.3.5. Փակ նպատակային մրցույթի դեպքում հայտերի ներկայացման համար նախատեսվող ժամկետը հաշվարկվում է նախաորակավորված մասնակիցներին հրավերի տրամադրման օրվանից,

15.3.6. Հայտերի ներկայացման ժամկետն առնվազն տասն աշխատանքային օր է:

15.3.7. Եթե արտակարգ կամ չնախատեսված իրավիճակի առաջացման հետևանքով ծագել է գնման անհետաձգելի պահանջ, և հայտերի ներկայացման համար սույն կետով նախատեսված ժամկետի կիրառումն անհնար է, պայմանով, որ նման պահանջը հնարավոր չէր օբյեկտիվորեն կանխատեսել, ապա հայտերի ներկայացման համար նախատեսվող ժամկետն առնվազն 10 օրացուցային օր է:

15.3.8. Փակ պարբերական մրցույթի դեպքում հայտերի ներկայացման համար նախատեսվող ժամկետն առնվազն հինգ օրացուցային օր է, որը հաշվարկվում է նախաորակավորված մասնակիցներին հրավերի տրամադրման օրվանից:

15.4. Երկու փուլով մրցույթի կիրառման պայմանները

15.4.1. Մրցույթը կարող է կատարվել երկու փուլով՝

a. եթե Պատվիրատուն ճշգրիտ (օբյեկտիվորեն) չի կարող Օրենքի պահանջներին համապատասխան սահմանել գնման առարկայի բնութագրերը,

b. եթե Պատվիրատուն հնարավորություն է տալիս մասնակիցներին ներկայացնել գնման առարկայի հնարավոր բնութագրերի վերաբերյալ այլընտրանքային առաջարկներ,

c. եթե գնման առարկայի բնութագրերի որոշ առանձնահատկություններ հստակեցնելու նպատակով մասնակիցների հետ բանակցելու անհրաժեշտություն է առաջացել,

d. պետություն-մասնավոր գործընկերության, ներառյալ՝ հավատարմագրային կառավարման և կոնցեսիայի գործարքների կնքման դեպքերում:

15.4.2. Երկու փուլով մրցույթի ընթացակարգի կիրառման դեպքում կազմակերպվում է նախաորակավորման ընթացակարգ: Նախաորակավորման ընթացակարգին մասնակցելու իրավունք ունի ցանկացած մասնակից: Պատվիրատուն հրավեր է ներկայացնում և բանակցությունների է հրավիրում միայն նախաորակավորված մասնակիցներին: Բանակցությունների նպատակն է մշակել Պատվիրատուի պահանջները բավարարող գնման առարկայի բնութագրերի մեկ կամ ավելի այլընտրանքային տարբերակներ: Բանակցությունների արդյունքում պատվիրատուն նախաորակավորված մասնակիցներին տրամադրում է վերջնական հրավեր:

15.5. Նախաորակավորման ընթացակարգերը

15.5.1. Պատվիրատուն կազմակերպում է նախաորակավորման ընթացակարգ, եթե գնումը կատարվում է՝

a. երկփուլ մրցույթով,

b. փակ նպատակային մրցույթով,

c. փակ պարբերական մրցույթով,

d. պետական գաղտնիք պարունակող գնանշման հարցման ձևով,

e. խորհրդատվական ծառայությունների գնման նպատակով՝ բաց մրցույթով կամ փակ նպատակային մրցույթով:

15.5.2. Նախաորակավորման ընթացակարգ կազմակերպելու դեպքում՝

a. այդ մասին հրապարակվում է նախաորակավորման հայտարարություն,

b. խորհրդատվական ծառայության, երկու փուլով մրցույթի կամ փակ նպատակային մրցույթի կիրառման դեպքում նախաորակավորման հայտերի ներկայացման համար նախատեսվող ժամկետն առնվազն 10 օրացուցային օր է, որը հաշվարկվում է նախաորակավորման հայտարարության հրապարակման օրվանից,

c. եթե գնման գինը չի գերազանցում գնումների բազային միավորի յոթանասունապատիկը կամ արտակարգ կամ չնախատեսված այլ իրավիճակի առաջացման հետևանքով ծագել է գնման անհետաձգելի պահանջ, և սույն մասի b ենթակետով նախատեսված ժամկետի կիրառումը անհնար է, պայմանով, որ նման պահանջը հնարավոր չէր օբյեկտիվորեն կանխատեսել, ապա նախաորակավորման հայտերի ներկայացման համար նախատեսվող ժամկետն առնվազն հինգ

օրացուցային օր է, որը հաշվարկվում է նախաորակավորման հայտարարության հրապարակման օրվանից:

15.5.3. Նախաորակավորման հայտարարությունը հրապարակվում է տեղեկագրում և պարունակում է հետևյալ տեղեկությունները.

a. Պատվիրատուի անվանումը և գտնվելու վայրը,

a. գնման ընթացակարգի ծածկագիրը,

b. մասնակիցների նախաորակավորման ընթացակարգին մասնակցելու իրավունքի մասին հայտարարությունը,

c. լեզուն կամ լեզուները, որոնցով պետք է ներկայացվեն նախաորակավորման հայտերը,

d. պայմանագրի և գնման առարկայի բնութագրերի բովանդակության համառոտ և հստակ շարադրանքը,

e. նախաորակավորման հայտի պատրաստման և ներկայացման կարգը, այդ թվում՝ ձևն ու վայրը, ներկայացման վերջնաժամկետը,

f. մասնակցի՝ մասնակցության իրավունքին և որակավորմանը ներկայացվող պահանջները և դրանց գնահատման կարգը,

g. նշում այն մասին, որ տվյալ գնման գործընթացի նկատմամբ կիրառվում են Առևտրի համաշխարհային կազմակերպության պետական գնումների համաձայնագրի դրույթները, եթե գնման գինը գերազանցում է այդ Համաձայնագրով սահմանված շեմերը, և գնման գործընթացը կազմակերպվում է երկու փուլով մրցույթի ընթացակարգով,

h. այլ անհրաժեշտ պահանջներ, որոնք վերաբերում են նախաորակավորման ընթացակարգին:

15.5.4. Պատվիրատուն պետք է մեկ աշխատանքային օրվա ընթացքում պատասխանի մասնակցի նախաորակավորման հայտարարության վերաբերյալ պարզաբանումներ տալու հարցմանը: Հարցման և տրված պարզաբանման մասին տեղեկատվությունը պատվիրատուն միաժամանակ հրապարակում է տեղեկագրում, ընդ որում, չեն նշվում պարզաբանում պահանջած մասնակցի տվյալները: Որևէ մասնակցի տեղեկություն տրամադրելու դեպքում պատվիրատուն պետք է ապահովի այդ տեղեկության մատչելիությունը բոլոր հնարավոր մասնակիցների համար:

15.5.5. Նախաորակավորման հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն երկու աշխատանքային օր առաջ նախաորակավորման հայտարարության մեջ կարող են կատարվել փոփոխություններ: Փոփոխություն կատարելու դեպքում՝

a. այդ մասին տեղեկությունները շրջանառվում են նույն եղանակով, ինչպես որ շրջանառության մեջ է դրվել նախաորակավորման սկզբնական հայտարարությունը,

b. նախաորակավորման հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը հաշվվում է այդ փոփոխությունների մասին տեղեկագրում հայտարարության հրապարակման օրվանից:

15.5.6. Փոփոխություններ կատարելու օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրվա ընթացքում փոփոխություն կատարելու մասին հայտարարություն է հրապարակվում տեղեկագրում:

15.5.7. Նախաորակավորման հայտարարությամբ սահմանված կարգով գնահատվում է մասնակցի հայտը՝ գնումներին մասնակցելու իրավունքը և որակավորումը, կազմվում է նախաորակավորված մասնակիցների ցուցակ:

15.5.8. Գնման գործընթացին հետագա մասնակցության իրավունք են ստանում նախաորակավորված մասնակիցները:

15.5.9. Եթե երկու փուլով մրցույթի անցկացման նպատակով կազմակերպված նախաորակավորման ընթացակարգին հայտ է ներկայացրել մինչև երեք մասնակից, ապա Հանձնաժողովի որոշմամբ կարող է՝

a. նախաորակավորման հայտարարությունը վերահրապարակվել,

b. կազմակերպվել նախաորակավորման նոր ընթացակարգ,

c. նախաորակավորման ընթացակարգը հայտարարվել չկայացած,

d. շարունակվել գնման գործընթացը:

16. Գնման գործընթացի նախապատրաստում

16.1. Գնման գործընթացի ընթացակարգի կազմակերպման նպատակով գնման պահանջի ծագման օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում գրավոր սահմանվում են՝

a. պատասխանատու ստորաբաժանում, և

b. գնումները համակարգող:

16.2. Եթե պատասխանատու ստորաբաժանում սահմանելու ակտով նախատեսված չէ ավելի կարճ ժամկետ, ապա գնման պահանջի ծագման օրվան հաջորդող վաթսուն աշխատանքային օրվա ընթացքում պատասխանատու ստորաբաժանումը՝

16.2.1. կազմում և հաստատում է գնման հայտը, որը ներառում է՝

a. գնման առարկայի բնութագրերը: Ընդ որում, ապրանքների գնման դեպքում պարտադիր է որակի սերտիֆիկատի առկայությունը, եթե դա կիրառելի է տվյալ ապրանքի համար,

b. մասնակիցների որակավորման չափանիշները,

c. ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման համար պահանջող լիցենզիաների տեսակները, եթե կնքվելիք պայմանագրի կատարումը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ հանդիսանում է լիցենզավորման ենթակա գործունեություն,

d. մեկ անձից գնումներ կատարելու դեպքում այն անձի կամ անձանց (հնարավոր մասնակից) տվյալները (անվանումը, գտնվելու վայրը, հնարավորության դեպքում՝ էլեկտրոնային փոստի հասցեն), որոնց պետք է ուղարկվի տվյալ գնման հրավերը՝ բացառությամբ էլեկտրոնային համակարգի միջոցով մեկ անձից գնումների կատարման դեպքերի,

e. գնման առարկայի պահանջվող ծավալը և մեկ միավորի ձեռքբերման համար նախատեսված առավելագույն գինը,

f. ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման ժամկետները, այդ թվում՝ վերջնաժամկետը,

g. կանխավճարի հատկացման հնարավորությունը և առավելագույն չափը:

16.2.2. կազմում և հաստատում է Հանձնաժողովի կազմում ընդգրկելու նպատակով առաջադրվող անձանց (թեկնածուների) ցուցակը՝ ըստ Հանձնաժողովի կազմում այդ անձանց ընդգրկման առաջնահերթության՝ նշելով Հանձնաժողովի նախագահի թեկնածությունը: Ընդ որում, ըստ գնման առանձնահատկությունների, հանձնաժողովների կազմի հաստատմանն առաջադրվող անձանց ցուցակը կարող է ներկայացվել հաստատման մեկից ավելի գնման գործընթացների իրականացման համար: Տվյալ պարագայում

հանձնաժողովի կազմը կարող է հաստատվել նույն հայտատուից կամ պատասխանատու ստորաբաժանումից ստացված բոլոր հայտերի իրականացման համար:

16.3. Պատասխանատու ստորաբաժանումը գնման հայտը՝ հերթական համարակալումով, իր կողմից հաստատվելու օրը գրությամբ փոխանցում է գնումները համակարգողին:

16.4. Գնումները համակարգողը գնման հայտն ստանալուն հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում գնահատում է գնման հայտի կազմման համապատասխանությունը գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջներին: Եթե արձանագրվում է անհամապատասխանություն, ապա գնման հայտը վերադարձվում է պատասխանատու ստորաբաժանմանը՝ նշելով արձանագրված անհամապատասխանությունները: Պատասխանատու ստորաբաժանումն ուղղում և երկու աշխատանքային օրվա ընթացքում գնումները համակարգողին է ներկայացնում ճշտված գնման հայտը: Արձանագրված անհամապատասխանության հետ չհամաձայնելու դեպքում պատասխանատու ստորաբաժանումը երկու աշխատանքային օրվա ընթացքում գնման հայտը վերադարձնում է գնումները համակարգողին, որն այն ստանալուն հաջորդող աշխատանքային օրվա ընթացքում գրավոր զեկուցում է պատվիրատուի ղեկավարին:

16.5. Զեկուցագիրն ստանալու օրը պատվիրատուի ղեկավարը՝

16.5.1. հանձնարարում է պատվիրատուի իրավաբանական ծառայությանը երկու աշխատանքային օրվա ընթացքում տալ իրավական եզրակացություն: Իրավաբանական ծառայությունը կարող է եզրակացություն տալու համար պահանջել և ստանալ լրացուցիչ նյութեր:

16.5.2. Իրավական եզրակացությունն ստանալուց հետո հանձնարարում է՝

a. գնումները համակարգողին՝ պայմանագրի կնքման գործընթացը կազմակերպել՝ հիմք ընդունելով ներկայացված գնման հայտը, եթե իրավական եզրակացությամբ զեկուցագիրը համարվել է անհիմն, կամ

b. պատասխանատու ստորաբաժանմանը, ըստ իրավական եզրակացության, վերանայել գնման հայտը:

17. Հանձնաժողով

17.1. Պայմանագրի կնքման գործընթացը կազմակերպելու նպատակով սույն Կանոնադրության 16.4 կետով նախատեսված գրավոր հանձնարարականը կամ գնման հայտն ստանալուն հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում գնումների համակարգողը կազմում և գրավոր պատվիրատուի ղեկավարի հաստատմանն է ներկայացնում Հանձնաժողով ձևավորելու մասին հրամանի նախագիծը, որը պատվիրատուի ղեկավարի կողմից հաստատվում է երկու աշխատանքային օրվա ընթացքում:

17.2. Հանձնաժողովի կազմը բաղկացած է առնվազն երեք անդամից և ունի նախագահ ու քարտուղար, որոնք սահմանվում են Հանձնաժողովի կազմավորման մասին ակտով: Քարտուղարը Հանձնաժողովի անդամ չէ:

17.3. Հանձնաժողովի քարտուղարը՝

a. կազմակերպում է Հանձնաժողովի աշխատանքները,

b. ստանում և հաշվառում է հայտերը,

c. կազմում և Հանձնաժողովին է ներկայացնում վերջինիս հաստատմանը ենթակա փաստաթղթերի նախագծերը,

d. տրամադրում է հրավեր,

e. համապատասխան փաստաթղթեր կազմելով՝ գրառում է Հանձնաժողովի գործունեությանը վերաբերող տեղեկությունները և ապահովում Հանձնաժողովի գործունեության ընթացքում այդ փաստաթղթերի անվնաս պահպանումը,

f. կազմակերպում է գնման ընթացակարգի վերաբերյալ պարզաբանումների տրամադրման աշխատանքները,

g. պատասխանատվություն է կրում Հանձնաժողովի գործունեության՝ գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխանության համար,

h. իրականացնում է իրեն վերապահված այլ գործառույթներ:

17.4. Հանձնաժողովի գործունեությունն իրականացվում է նիստերի միջոցով: Հանձնաժողովի նիստն իրավազոր է, եթե նիստին ներկա է Հանձնաժողովի անդամների երկու երրորդը: Հայտերի բացման նիստն իրավազոր է, եթե նիստին ներկա են Հանձնաժողովի քարտուղարը և Հանձնաժողովի առնվազն երկու անդամ:

17.5. Հանձնաժողովի նիստին նախագահի մասնակցության անհնարինության դեպքում նիստը նախագահում է ըստ Հանձնաժողովի կազմում ընդգրկման առաջնահերթության նախագահի թեկնածուից հետո նշված՝ նիստին ներկա հաջորդող թեկնածուն:

17.6. Նիստն իրավազոր չլինելու դեպքում դրա մասին հայտնի դառնալու պահին քարտուղարը գրավոր զեկուցում է պատվիրատուի ղեկավարին, որը հետևյալ հաջորդականությամբ՝

17.6.1. ոչ ավելի, քան երկու աշխատանքային օրով կասեցնում է գնման գործընթացը,

17.6.2. ապահովում է տվյալ անդամի ներկայանալը Հանձնաժողովի նիստին կամ տվյալ անդամի փոխարեն, պատասխանատու ստորաբաժանման առաջարկության հիման վրա, նշանակում է Հանձնաժողովի նոր անդամ,

17.6.3. սահմանում է նիստի անցկացման օրը և ժամը, որը չպետք է ուշ լինի գնման ընթացակարգի կասեցման վերջնաժամկետից:

17.7. Հանձնաժողովի որոշումը համարվում է ընդունված, եթե այդ որոշմանը կողմ են քվեարկել Հանձնաժողովի նիստին ներկա անդամների կեսից ավելին: Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամն ունի մեկ ձայնի իրավունք և քվեարկում է կողմ կամ դեմ: Ձայների հավասարության դեպքում Հանձնաժողովի նախագահի, իսկ նրա բացակայության դեպքում նիստը նախագահողի ձայնը վճռորոշ է:

17.8. Հանձնաժողովի արտահերթ նիստը հրավիրում է քարտուղարը՝ պատվիրատուի ղեկավարի գրավոր հանձնարարությամբ կամ Հանձնաժողովի անդամների առնվազն մեկ երրորդի գրավոր պահանջով՝ նրանց նշած ժամկետում և օրակարգով:

Արտահերթ նիստ հրավիրելու, դրա օրակարգի և ժամկետի մասին քարտուղարը նիստից առնվազն վեց ժամ առաջ գրավոր կամ էլեկտրոնային եղանակով տեղյակ է պահում Հանձնաժողովի անդամներին:

17.9. Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ գնահատում է ներկայացված հայտերը՝ ներառյալ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերը, դրանց գնահատման արդյունքներն արտացոլում է գնահատման թերթիկներում և իր ստորագրությամբ հաստատում դրանք:

17.10. Հանձնաժողովի անդամները պատասխանատվություն են կրում իրենց որոշումների, այդ թվում՝ իրենց կողմից հաստատված փաստաթղթերի, պահանջների, ինչպես նաև գնման ընթացակարգի հաղթողին որոշելու հիմնավորվածության համար:

17.11. Հանձնաժողովի անդամի կամ քարտուղարի կողմից իր պարտականությունների չկատարումը, ինչպես նաև Հանձնաժողովի անդամ չհանդիսացող պաշտոնատար անձի՝ Հանձնաժողովի

գործունեությանը միջամտելը հանգեցնում են այդ անդամին (պաշտոնատար անձին) ՀՀ օրենսդրությամբ սահմանված պատասխանատվության ենթարկելու նպատակով իրավասու մարմնի կողմից միջոցների ձեռնարկմանը:

17.12. Եթե Հանձնաժողովը չի ապահովում գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների կատարումը, ապա քարտուղարը դրա մասին հայտնի դառնալու օրը գրավոր զեկուցում է Պատվիրատուի ղեկավարին, ով՝ զեկուցագիրը ստանալու օրը՝

a. հրամանով կասեցնում է Հանձնաժողովի գործունեությունը: Եթե կասեցման հրամանով այլ ժամկետ նախատեսված չէ, ապա Հանձնաժողովի գործունեությունը կասեցվում է մինչև երեք աշխատանքային օրով,

b. հանձնարարում է Պատվիրատուի իրավաբանական ծառայությանը մինչև կասեցման ժամկետի ավարտը տալ իրավական եզրակացություն: Իրավաբանական ծառայությունը կարող է եզրակացություն տալու համար պահանջել և ստանալ լրացուցիչ նյութեր:

17.13. Իրավաբանական ծառայության գրավոր առաջարկի հիման վրա հարցի վերաբերյալ մասնագիտական եզրակացություն ստանալու նպատակով կարող է դիմել իրավասու (մասնագիտացված) մարմինների: Նման դեպքում Հանձնաժողովի գործունեության կասեցման ժամկետը երկարաձգվում է մինչև եզրակացություն ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրը, ինչի կապակցությամբ Պատվիրատուի ղեկավարի կողմից արձակվում է հրաման.

17.14. Իրավական եզրակացությունն ստանալուց հետո հրամանով՝

a. Հանձնաժողովի գործունեությունը վերականգնվում է, եթե իրավական եզրակացությամբ զեկուցագիրը համարվել է անհիմն, կամ

b. հանձնարարվում է Հանձնաժողովին, ըստ իրավական եզրակացության, վերանայել Հանձնաժողովի որոշումները: Զեկուցագիրը և իրավական եզրակացությունը կցվում են արձանագրությանը:

17.15. Մինչև Հանձնաժողովի գործունեության կասեցման ժամկետի ավարտը նոր հրաման արձակվելու դեպքում Հանձնաժողովի գործունեությունը համարվում է վերականգնված: Հանձնաժողովի գործունեությունը կասեցնելու հետ կապված փաստաթղթերի պատճենները կցվում են գնման ընթացակարգի արձանագրությանը:

17.16. Գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ պայմանագիրը կնքվելու օրվան հաջորդող օրը Հանձնաժողովը, տվյալ գնման բավարարման մասով , համարվում է լուծարված:

17.17. Սույն Կանոնադարության 14 գլխի համաձայն գնում կատարվելու դեպքում, եթե Հանձնաժողով չի ձևավորվում, ապա Հանձնաժողովի լիազորություններն իրականացնում է պատասխանատու ստորաբաժանման ղեկավարը, մասնագիտական խումբ ձևավորված լինելու դեպքում՝ խումբը, իսկ Հանձնաժողովի քարտուղարի լիազորությունները՝ գնումները համակարգողը:

17.18. Հանձնաժողովի անդամները և քարտուղարը պարտավոր են ապահովել մասնակիցների կողմից որպես գաղտնի նշված տեղեկությունների գաղտնիությունը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով պատասխանատվություն են կրում դրանց հրապարակման հետևանքով մասնակիցներին պատճառված վնասի համար՝ բացառությամբ օրենքով նախատեսված՝ պարտադիր հրապարակման ենթակա տեղեկությունների:

18. **Մրցութային փաստաթղթերի բովանդակությունը**

18.1. Հանձնաժողովի կազմավորմանը հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում քարտուղարը հրավիրում է Հանձնաժողովի առաջին նիստը: Նիստի արդյունքում, գնման հայտի հիման վրա, Հանձնաժողովը հաստատում է՝

a. գնումների կամ նախաորակավորման հայտարարության տեքստը,

b. հրավերի տեքստը,

c. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը:

18.2. Բաց մրցույթով գնում կատարելու համար մասնակիցներ ներգրավելու նպատակով տեղեկագրում հրապարակվում են գնումների հայտարարություն և հրավեր:

18.3. Գնումների հայտարարությունը պարունակում է հետևյալ տեղեկությունները՝

18.3.1. պատվիրատուի անվանումը և գտնվելու վայրը,

18.3.2. բաց մրցույթի ծածկագիրը,

18.3.3. պայմանագրի և գնման առարկայի բնութագրերի բովանդակության համառոտ և հստակ շարադրանքը,

18.3.4. մասնակիցների՝ բաց մրցույթին մասնակցելու իրավունքի մասին հայտարարությունը,

18.3.5. թղթային ձևով հրավեր ստանալու պայմանները, այդ թվում՝ դրա համար գանձվող վճարի չափը, վճարման կարգը,

18.3.6. լեզուն կամ լեզուները, որոնցով պետք է ներկայացվեն հայտերը,

18.3.7. մասնակիցների որակավորման չափանիշների համառոտ շարադրանքը,

18.3.8. ընտրված մասնակցին որոշելու համար կիրառվելիք չափանիշները,

18.3.9. հայտեր ներկայացնելու ձևը, տեղը և ժամկետը,

18.3.10.բողոքարկման համար պատասխանատու մարմնի անվանումն ու տեղը և բողոքների ներկայացման ժամկետների մասին հստակ տեղեկությունները,

18.3.11.հայտերի բացման ձևը, վայրը, օրը և ժամը,

18.3.12.նշում այն մասին, որ տվյալ գնման գործընթացի նկատմամբ կիրառվում են Առևտրի համաշխարհային կազմակերպության պետական գնումների համաձայնագրի դրույթները, եթե գնման գինը գերազանցում է այդ համաձայնագրով սահմանված շեմերը,

18.3.13.անհրաժեշտության դեպքում՝ այլ տեղեկություններ:

18.4. Հրավերը պետք է պարունակի՝

18.4.1. հղում հրապարակված հայտարարությանը՝ ի լրումն որի տրամադրվում է հրավերը,

18.4.2. մրցույթի ծածկագիրը,

18.4.3. հայտերի պատրաստման հրահանգները,

18.4.4. որակավորման չափանիշները, մասնակցության իրավունքի պահանջները և դրանց գնահատման կարգը,

18.4.5. գնման առարկայի բնութագրերը,

18.4.6. հայտերի գնահատման և ընտրված մասնակցի ընտրության կարգը,

18.4.7. պայմանագրի նախագիծը,

18.4.8. եթե գնումն իրականացվում է չափաբաժիններով, և մասնակիցներին թույլատրվում է հայտեր ներկայացնել գնվող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների միայն մի մասի համար, ապա դրա պայմանները և կարգը,

18.4.9. հայտով ներկայացվող գնի հաշվարկման կարգը, ներառյալ՝ գինը արտարժույթով ներկայացվելու դեպքում դրա փոխարժեքը,

18.4.10.նշում այն մասին, որ առաջարկվող գինը, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների արժեքից բացի, ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից: Առաջարկվող գնի հաշվարկը պետք է ներկայացվի հայտով,

18.4.11.հայտի և պայմանագրի կատարման ապահովմանը վերաբերող պահանջները,

18.4.12.հայտերի ներկայացման պայմանները, ներառյալ՝ ձևը, տեղը, ժամկետը և հայտի լեզուն, հայտերի վավերականության ժամկետը,

18.4.13.գնման գործընթացի վերաբերյալ պարզաբանումներ ստանալու կարգը, տեղեկություններ մասնակիցների հետ կազմակերպվելիք հանդիպումների մասին, ինչպես նաև Հանձնաժողովի քարտուղարի անունը և ազգանունը,

18.4.14.հայտերի բացման ձևը, վայրը, օրը և ժամը,

18.4.15.տվյալ գնմանը վերաբերող՝ Օրենքի և իրավական այլ ակտերի դրույթներին կատարված հղումները,

18.4.16.պայմանագիր կնքելու առաջարկը ներկայացնելու պայմանները,

18.4.17.գնման գործընթացի հետ կապված գործողությունները (անգործությունը) կամ ընդունված որոշումները բողոքարկելու՝ մասնակցի իրավունքը և կարգը,

18.4.18.հայտը մերժելու հիմքերը,

18.4.19.հայտի նախապատրաստման, ներկայացման, բացման և գնահատման, ինչպես նաև գնումների վերաբերյալ անհրաժեշտ այլ տեղեկատվություն:

18.5. Հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է՝

18.5.1. գնման ընթացակարգին մասնակցելու գրավոր դիմում՝ նշելով հարկ վճարողի հաշվառման համարը,

18.5.2. իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին,

18.5.3. գնային առաջարկ,

18.5.4. հայտի ապահովում:

18.5.5. եթե հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի ձևով, ապա գնման ընթացակարգն էլեկտրոնային եղանակով կազմակերպված լինելու դեպքում ներկայացվում է երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը՝ պայմանով, որ, եթե մասնակիցը ճանաչվում է առաջին տեղը զբաղեցրած, ապա սույն Կանոնադրության 22.6.4 ենթակետով սահմանված կարգով և ժամկետում ներկայացնում է դրա բնօրինակը,

18.5.6. հրավերով նախատեսված լիցենզիայի պատճենը,

18.5.7. ապրանքների գնման դեպքում իր կողմից հաստատված հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ՝ պայմանով, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում հրավերով սահմանված կարգով ներկայացնում է նաև առաջարկվող ապրանքային նշանով ապրանքի արտադրողի անվանումը, ծագման երկիրը, ապրանքի տեխնիկական բնութագրերը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր),

18.5.8. հայտարարություն՝ գերիշխող դիրքի չարաշահման և հակամրցակցային համաձայնության բացակայության մասին,

18.5.9. հայտարարություն՝ տվյալ գնման գործընթացում իրեն փոխկապակցված անձանց միաժամանակյա մասնակցության բացակայության մասին,

18.5.10.այն ֆիզիկական անձի (անձանց) տվյալները, ով ուղղակի կամ անուղղակի ունի մասնակցի կանոնադրական կապիտալում քվեարկող բաժնետոմսերի (բաժնեմասերի,

փայերի) ավելի, քան տասը տոկոսը՝ ներառյալ ըստ ներկայացնողի բաժնետոմսերը կամ այն անձի (անձանց) տվյալները, ով իրավունք ունի նշանակելու կամ ազատելու մասնակցի գործադիր մարմնի անդամներին կամ ստանում է մասնակցի կողմից իրականացվող ձեռնարկատիրական կամ այլ գործունեության արդյունքում ստացված շահույթի տասնհինգ տոկոսից ավելին: Սույն ենթակետի մեջ նշված անձանց բացակայության դեպքում ներկայացվում են գործադիր մարմնի ղեկավարի և անդամների տվյալները: Ընդ որում, եթե մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից, ապա սույն ենթակետով նախատեսված տեղեկատվությունը պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության հետ միաժամանակ հրապարակվում է տեղեկագրում:

18.6. Մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Ընդ որում, մասնակիցների գնային առաջարկների գնահատումը և համեմատումն իրականացվում են առանց սույն ենթակետում նշված հարկի գումարի հաշվարկման:

18.7. Պահանջի դեպքում որևէ մասնակցի հայտի՝ ներառյալ գնային առաջարկի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև մասնակցի, այդ թվում՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը պարունակող փաստաթղթի (փաստաթղթերի) պատճենները Հանձնաժողովի քարտուղարն անհապաղ տրամադրում է նման պահանջ ներկայացրած այլ մասնակցին: Պահանջի կատարման անհնարինության դեպքում պահանջը ներկայացրած անձին անհապաղ տրամադրվում են բնօրինակ փաստաթղթերը, որոնց վերջինս ծանոթանում է տեղում, իրավունք ունի լուսանկարելու դրանք և վերադարձնում է քարտուղարին նիստի ընթացքում՝ առանց խոչընդոտելու Հանձնաժողովի բնականոն գործունեությունը:

18.8. Նշում կանխավճարի հատկացման և դրա առավելագույն չափի մասին՝ պայմանով, որ ընտրված մասնակիցը կարող է հրաժարվել առաջարկված կանխավճարից կամ դրա մի մասից:

18.9. Կնքվելիք պայմանագիրը կարող է իրականացվել գործակալության կամ ենթակապալի պայմանագիր կնքելու միջոցով: Գործակալության կամ ենթակապալի պայմանագրի կողմ չի կարող հանդիսանալ տվյալ ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած մասնակիցը: Եթե պայմանագիրն իրականացվելու է գործակալության կամ ենթակապալի միջոցով, ապա մասնակիցը հայտով ներկայացնում է նաև գործակալության կամ ենթակապալի պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները:

18.10. Մասնակիցները կարող են գնման ընթացակարգին մասնակցել համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով): Նման դեպքում՝

18.10.1. հայտը ներառում է նաև համատեղ գործունեության պայմանագիրը,

18.10.2. հայտի գնահատման ժամանակ հաշվի է առնվում, որ համատեղ գործունեության պայմանագրի յուրաքանչյուր անդամի որակավորումը պետք է համապատասխանի այդ պայմանագրով տվյալ անդամի ստանձնած՝ հրավերով սահմանված որակավորման պահանջներին,

18.10.3. հրավերով սահմանվում է, որ համատեղ գործունեության պայմանագրի կողմերից որևէ մեկը չի կարող նույն ընթացակարգին ներկայացնել առանձին հայտ: Սույն ենթակետով

պահանջի չպահպանման դեպքում հայտերի բացման նիստում մերժվում են ինչպես համատեղ գործունեության կարգով, այնպես էլ առանձին ներկայացված հայտերը:

18.11. Եթե պայմանագրի գինը կայուն է, ապա մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է մեկ թվով՝ պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գնով:

18.12. Եթե տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի, աշխատանքի կամ ծառայության նախահաշվային գինը չի գերազանցում գնումների բազային միավորի յոթանասունապատիկը, ապա հայտի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ փողի ձևով: Այլ դեպքերում հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով:

18.13. Եթե տվյալ ընթացակարգի շրջանակում ընտրված մասնակցի ներկայացրած գնային առաջարկը չի գերազանցում գնումների բազային միավորի յոթանասունապատիկը, ապա պայմանագրի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ փողի ձևով: Այն դեպքում, երբ տվյալ ընթացակարգի շրջանակում ընտրված մասնակցի ներկայացրած գնային առաջարկը գերազանցում է գնումների բազային միավորի յոթանասունապատիկը, ապա պայմանագրի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով:

18.14. Էլեկտրոնային եղանակով ծանուցումներն իրականացվում են տեղեկություններն էլեկտրոնային փոստին ուղարկվելու միջոցով, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների, որի ժամանակ ծանուցումներն իրականացվում են թղթային եղանակով: Հրավերով և հայտով նախատեսվում են պատվիրատուի և մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեները: Տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում դրանք ուղարկողը տեղեկությունները (փաստաթղթերը) հաստատում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, որի արտատպումը պետք է տեսանելի լինի փաստաթղթի վրա, իսկ հավաստագիրը՝ զետեղված «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրամադրված նույնականացման քարտում, կամ տեղեկությունները (փաստաթղթերը) ուղարկում է հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով: Գնման ընթացակարգն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով կազմակերպված լինելու դեպքում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցները՝ այդ փաստաթղթերը ներկայացնում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:

18.15. Ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը Հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է էլեկտրոնային եղանակով: Ապրանքների գնման դեպքում պայմանագրի նախագծում ներառվում է ընտրված մասնակցի կողմից հայտով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը:

18.16. Ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր, և դա ներկայացնելու գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում: Պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում:

18.17. Գնման ընթացակարգին արգելվում է սույն Կանոնադրությամբ սահմանված փոխկապակցված անձանց միաժամանակյա մասնակցությունը:

18.18. Գնման ընթացակարգը չափաբաժիններով կազմակերպվելու դեպքում հայտերի գնահատումը և ընտրված մասնակցի որոշումն իրականացվում է ըստ առանձին չափաբաժինների: Եթե չափաբաժիններով կազմակերպված գնման ընթացակարգի շրջանակում՝

a. մասնակիցը հայտ ներկայացնում է մեկից ավելի չափաբաժինների համար, ապա կարող է ներկայացնել՝ ինչպես յուրաքանչյուր չափաբաժնի համար առանձին, այնպես էլ՝ մեկ հայտի ապահովում՝ բոլոր չափաբաժինների համար: Մեկ հայտի ապահովում ներկայացվելու դեպքում դրա գումարը հաշվարկվում է ներկայացված չափաբաժինների գնային առաջարկների հանրագումարի նկատմամբ: Եթե հանրագումարը գերազանցում է գնումների բազային միավորի յոթանասունապատիկը, սակայն ըստ առանձին չափաբաժինների ներկայացված գնային առաջարկները չեն գերազանցում այդ չափը, ապա ապահովումը կարող է ներկայացվել միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ փողի ձևով,

b. մասնակիցն ընտրված է ճանաչվում մեկից ավելի չափաբաժինների մասով, ապա կարող է ներկայացնել՝ ինչպես յուրաքանչյուր չափաբաժնի համար առանձին, այնպես էլ՝ մեկ պայմանագրի ապահովում՝ բոլոր չափաբաժինների համար: Մեկ պայմանագրի ապահովում ներկայացվելու դեպքում դրա գումարը հաշվարկվում է պայմանագրի ընդհանուր գնի նկատմամբ: Եթե պայմանագրի ընդհանուր գինը գերազանցում է գնումների բազային միավորի յոթանասունապատիկը, սակայն ըստ առանձին չափաբաժինների գները չեն գերազանցում այդ չափը, ապա ապահովումը կարող է ներկայացվել միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ փողի ձևով,

c. մասնակիցը հրաժարվում է որևէ չափաբաժնից կամ պայմանագիր կնքելուց, կամ զրկվում է պայմանագիր կնքելու իրավունքից, ապա հայտի ապահովումը վճարվում է միայն այդ չափաբաժնի նկատմամբ հաշվարկված ապահովման չափով,

d. եթե կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հետևանքով որևէ չափաբաժնի մասով լուծվում է, ապա պայմանագրի ապահովումը վճարվում է միայն այդ չափաբաժնի նկատմամբ հաշվարկված գումարի չափով:

18.19. Պայմանագրով (նախագծով) սահմանվում է նաև, որ՝

18.19.1. պայմանագրի կողմը պատասխանատվություն է կրում գործակալի կամ ենթակապալառուի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար,

18.19.2. պայմանագրի կատարման ընթացքում գործակալի կամ ենթակապալառուի փոփոխման դեպքում պայմանագրի կողմը գրավոր նախապես տեղեկացնում է պատվիրատուին՝ տրամադրելով գործակալության կամ ենթակապալի պայմանագրի նախագծի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները,

18.19.3. համատեղ գործունեության (կոնսորցիում) դեպքում մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում կոնսորցիումի հետ պատվիրատուի կնքած պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է, և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները,

18.19.4. պայմանագիր կնքած անձի (կատարողի) ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար պայմանագրով կարող են սահմանվել տույժեր և տուգանքներ: Տուգանքի չափը չի կարող պակաս լինել պայմանագրի ընդհանուր գնի 0,5 տոկոսից, իսկ տույժերի չափը՝ 0,05 տոկոսից: Տույժը հաշվարկվում է օրացուցային օրերով՝ պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ,

18.19.5.գնումների դիմաց վճարումներ իրականացնելիս՝ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում պատվիրատուն պարտավոր է ապահովել պայմանագրի կողմի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ,

18.19.6.եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքների թերություններ, ապա կապալառուն պարտավոր է իր հաշվին՝ պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները,

18.19.7.նախագծային փաստաթղթեր չպահանջող շինարարական ծրագրերի կամ հիմնական միջոց հանդիսացող ապրանքների գնման դեպքում երաշխիքային ժամկետ է սահմանվում պատվիրատուի կողմից աշխատանքը կամ ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից առնվազն 365 օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի կամ մատակարարված ապրանքի թերություններ, ապա պայմանագրի կողմը պարտավոր է իր հաշվին՝ պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները,

18.19.8.այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, պայմանագրի կողմը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծել պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին ՀՀ օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով պայմանագրի կողմի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է,

18.19.9.փաստաթղթերի մշակման ժամանակ նախագծողը ներկայացնում է պահանջվող փաստաթղթերը գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով,

18.19.10.շինարարական ծրագրերի կատարման ընթացքում նախագծային շեղումներ առաջանալու դեպքում նախագծողը պատվիրատուին վճարում է տուգանք՝ յուրաքանչյուր արձանագրված շեղման հետևանքով առաջացած կորստի չափով: Ընդ որում՝

1. շեղում է համարվում աշխատանքների կատարման ընթացքում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված և փորձաքննական եզրակացություն ունեցող նախագծային փաստաթղթերի ամփոփ նախահաշվով չնախատեսված աշխատանքների ծախսերի համար նախատեսված չափը՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը, գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների ի հայտ գալը, իսկ տուգանքի չափը հավասար է լրացուցիչ ծավալի աշխատանքների չափին,
2. կորուստ են համարվում նախագծային այնպիսի շեղումները, որոնք հանգեցնում են փաստացի կատարված աշխատանքների փոփոխմանը (քանդման, վերակառուցման և այլն) և լրացուցիչ աշխատանքների կատարմանը, իսկ տուգանքի չափը հավասար է

կորստի և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ու փորձաքննական եզրակացություն ունեցող նախագծային փաստաթղթերի աշխատանքների ամփոփ նախահաշվով չնախատեսված աշխատանքների ծախսերի համար նախատեսված չափը՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը, գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների հանրագումարի չափին,

18.19.11. շինարարական ծրագրի կատարման որակի նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնող անձի հետ կնքվող պայմանագրով նախատեսվում են կապալի օբյեկտի և դրա առանձին մասերի երաշխիքային ժամկետները, և սահմանվում է, որ եթե այդ ժամկետի ընթացքում ի հայտ են եկել թերություններ, ապա տեխնիկական հսկողություն իրականացնող անձը պայմանագրով նախատեսված իր պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատվիրատուին վճարում է տուգանք՝ հայտնաբերված թերության վերացման համար կապալառուի կամ պատվիրատուի կողմից իրականացված փաստացի ծախսերի չափով,

18.19.12. պայմանագրի կատարման ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել պատվիրատուին,

18.19.13. եթե պատվիրատուն պայմանագրով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված, և պայմանագրով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը պատվիրատուն պայմանագրի կողմին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը: Ընդ որում, պայմանագրի արդյունքը պատվիրատուին հանձնելու փաստն ամրագրվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը,

18.19.14. պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

19. Անցկացման կարգը

19.1. Գնումների մասին հայտարարության և հրավերի կամ նախաորակավորման մասին հայտարարության տեքստերը հաստատվելու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում քարտուղարը՝

19.1.1. գնումների մասին հայտարարության և հրավերի կամ նախաորակավորման մասին հայտարարության տեքստերը, իսկ շինարարական ծրագրերի գնման դեպքում նաև շինարարական ծրագրի նախահաշիվը՝ ներառյալ ըստ առանձին աշխատանքների տեսակների կատարման արժեքները, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի սահմանած կարգով հրապարակում է տեղեկագրում,

19.1.2. գնման ընթացակարգը թղթային եղանակով կազմակերպվելու դեպքում հրավերն էլեկտրոնային եղանակով ուղարկում է տվյալ գնման ընթացակարգի հնարավոր մասնակցին (մասնակիցներին), եթե գնումը կատարվում է սույն Կանոնադրության 13 գլխով, իսկ սույն Կանոնադրությամբ նախատեսված դեպքերում հրավերը Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի սահմանած կարգով հրապարակում է նաև տեղեկագրում,

19.1.3. Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով ձեռնարկում է միջոցներ՝ պայմանագիր կնքելու համար, եթե գնումը կատարվում է բորսաներից:

19.2. Հանձնաժողովի որոշմամբ՝ քարտուղարը լրացուցիչ միջոցներ է ձեռնարկում պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնման և նրանց միջև մրցակցության խրախուսման նպատակով՝ գնման գործընթացի մասին տեղեկությունները՝

19.2.1. գնումների կամ նախաորակավորման մասին հայտարարությունը հրապարակում է նաև զանգվածային լրատվության, այդ թվում՝ այլ էլեկտրոնային միջոցներով,

19.2.2. հրավերը տրամադրում (ուղարկում) է Հանձնաժողովի կողմից որոշված գնման գործընթացի հնարավոր մասնակիցներին:

19.3. Փաստաթղթային ձևով հրավեր ստանալու համար մասնակիցը պատվիրատուին ներկայացնում է գրավոր դիմում: Փաստաթղթային ձևով հրավեր ստանալու մասին դիմումի հետ միասին ներկայացվում է նաև հրավեր տրամադրելու համար պահանջվող գումարի վճարված լինելը հավաստող՝ բանկի կողմից տրված փաստաթղթի պատճենը, եթե գնումների մասին հայտարարությամբ փաստաթղթային ձևով հրավերի տրամադրման համար նախատեսված է վճար: Պատվիրատուն ապահովում է փաստաթղթային ձևով հրավերի տրամադրումն այդպիսի պահանջի ստացմանը հաջորդող աշխատանքային օրը: Էլեկտրոնային ձևով հրավեր տրամադրելու պահանջի դեպքում պատվիրատուն անվճար ապահովում է հրավերի՝ էլեկտրոնային ձևով տրամադրումը դիմումն ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվա ընթացքում:

19.4. Հրավերի պատճենահանման և առաքման հետ կապված ծառայությունների մատուցման նպատակով պատվիրատուն կնքում է ծառայությունների մատուցման մասին պայմանագիր, եթե այդ աշխատանքները չեն կատարվում պատվիրատուի ռեսուրսների հաշվին:

19.5. Մինչև հայտերի բացման նիստը պատվիրատուի պաշտոնատար անձանց արգելվում է հրավեր տրամադրելու պահանջ ներկայացրած կամ հրավեր ստացած անձանց մասին տեղեկություններ հաղորդելն այլ անձանց: Այդ պաշտոնատար անձանց կողմից այլ անձանց՝ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ չնախատեսված ձևով պարզաբանումներ կամ գնման ընթացակարգին վերաբերող այլ տեղեկություններ տրամադրելը հանգեցնում է այդ անձին օրենսդրությամբ սահմանված պատասխանատվության ենթարկելու նպատակով միջոցների ձեռնարկմանը:

19.6. Մասնակիցն իրավունք ունի հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ օրացուցային օր առաջ գրավոր պահանջել հրավերի պարզաբանում: Հարցումը կատարած մասնակցին պարզաբանումը տրամադրվում է գրավոր՝ հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու օրացուցային օրվա ընթացքում:

19.7. Հարցման և պարզաբանումների բովանդակության մասին հայտարարությունը հրապարակվում է տեղեկագրում՝ հարցումը կատարած մասնակցին պարզաբանումը տրամադրելու օրը, առանց նշելու հարցումը կատարած մասնակցի տվյալները, իսկ փակ մրցույթի դեպքում հարցման և պարզաբանումների բովանդակության մասին պարզաբանումը տրամադրվում է հրավեր ստացած մասնակիցներին:

19.8. Պարզաբանում չի տրամադրվում, եթե հարցումը կատարվել է սույն Կանոնադրության 19.6 կետով սահմանված ժամկետի խախտմամբ, ինչպես նաև, եթե հարցումը դուրս է հրավերի բովանդակության շրջանակից: Ընդ որում, մասնակիցը գրավոր ծանուցվում է պարզաբանում չտրամադրելու հիմքերի մասին՝ հարցումը ստանալու օրվան հաջորդող երկու օրացուցային օրվա ընթացքում:

19.9. Հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ օրացուցային օր առաջ հրավերում կարող են կատարվել փոփոխություններ: Բաց մրցույթի դեպքում փոփոխության

կատարելու օրվան հաջորդող երեք օրացուցային օրվա ընթացքում փոփոխություն կատարելու և դրանք տրամադրելու պայմանների մասին հայտարարություն է հրապարակվում տեղեկագրում, իսկ փակ մրցույթի դեպքում փոփոխությունները տրամադրվում են հրավեր ստացած մասնակիցներին:

19.10. Բաց մրցույթի հրավերում փոփոխություններ կատարվելու դեպքում հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը հաշվվում է այդ փոփոխությունների մասին տեղեկագրում հայտարարության հրապարակման օրվանից, իսկ փակ մրցույթի դեպքում՝ հրավերում կատարված փոփոխությունները հրավեր ստացած մասնակիցներին տրամադրվելու օրվանից:

19.11. Սույն Կանոնադրության 19.6-19.10. կետերի համաձայն կատարվող գործողությունների և դրանց արդյունքների մասին կազմվում է արձանագրություն, որը կցվում է գնման ընթացակարգի արձանագրությանը:

20. Հայտերի ներկայացում

20.1. Փաստաթղթային ձևով հայտը ներկայացվելու դեպքում մասնակցի առաջարկները, դրանց վերաբերող փաստաթղթերը դրվում են ծրարի մեջ, որը սոսնձում է այն ներկայացնողը: Ծրարում ներառված փաստաթղթերը կազմվում են բնօրինակից և հրավերում նշված թվով պատճեններից: Փաստաթղթերի փաթեթների վրա համապատասխանաբար գրվում են «բնօրինակ» և «պատճեն» բառերը: Ծրարը և հրավերով նախատեսված՝ մասնակցի կազմած փաստաթղթերն ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս լիազորած անձը (այսուհետ՝ գործակալ): Եթե հայտը ներկայացնում է գործակալը, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:

20.2. Կանոնադրության 20.1 կետում նշված ծրարի վրա հայտը կազմելու լեզվով նշվում են՝

20.2.1. պատվիրատուի անվանումը և հայտի ներկայացման վայրը (հասցեն),

20.2.2. մրցույթի ծածկագիրը,

20.2.3. «չբացել մինչև հայտերի բացման նիստը» բառերը,

20.2.4. մասնակցի անվանումը (անունը), գտնվելու վայրը և հեռախոսահամարը:

20.3. Սույն Կանոնադրության 20 գլխի պահանջներին չհամապատասխանող հայտերը Հանձնաժողովը հայտերի բացման նիստում մերժում է և նույնությամբ վերադարձնում ներկայացնողին:

20.4. Բացառությամբ էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով կատարվող գնումների՝ Հանձնաժողովի քարտուղարը հայտերը գրանցում է գրանցամատյանում՝ ըստ դրանց ստացման հերթականության, գրանցամատյանում նշելով գրանցման համարը, օրը և ժամը: Մասնակցի պահանջով դրա մասին տրվում է տեղեկանք: Հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուց հետո ներկայացված հայտերը գրանցամատյանում չեն գրանցվում և դրանք՝ ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում քարտուղարի կողմից վերադարձվում են: Գրանցամատյանի՝ բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը սույն Կանոնադրության 22.6.1 ենթակետով նախատեսված արձանագրության հետ մեկտեղ հրապարակվում է տեղեկագրում:

21. Հայտերի բացումը

21.1. Հայտերը բացվում են հրավերում նշված օրը, ժամին և վայրում՝ հայտերի բացման նիստում: Հայտերի բացման օրը և ժամը պետք է համընկնեն դրանք ներկայացնելու վերջնաժամկետին: Փակ մրցույթի դեպքում հայտերը հրավեր ստացած բոլոր մասնակիցների գրավոր համաձայնության դեպքում կարող են բացվել մինչև հրավերում նշված ժամկետը լրանալու օրը:

21.2. Հայտերի բացման նիստում՝

21.2.1. Նախագահը (նիստը նախագահողը) նիստը հայտարարում է բացված և հրապարակում է գնման հայտով սահմանված՝ տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գինը՝ մեկ թվով արտահայտված: Հանձնաժողովի քարտուղարը հաղորդում է տեղեկատվություն գրանցամատյանում կատարված գրառումների մասին և Հանձնաժողովի նախագահին է փոխանցում հայտերի գրանցամատյանը, դրա անբաժանելի մասը հանդիսացող մյուս փաստաթղթերը և գրանցված հայտերը:

21.2.2. Սույն Կանոնադրության 21.2.1 ենթակետում նշված փաստաթղթերը նախագահին (նիստը նախագահողին) փոխանցվելուց հետո Հանձնաժողովը գնահատում է՝

1. հայտեր պարունակող ծրարները կազմելու և ներկայացնելու համապատասխանությունը սահմանված կարգին և բացում համապատասխանող գնահատված հայտերը,
2. բացված յուրաքանչյուր ծրարում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայությունը և դրանց կազմման համապատասխանությունը հրավերով սահմանված վավերապայմաններին:

21.2.3. Հանձնաժողովի նախագահը հայտարարում է հայտեր ներկայացրած մասնակիցների գնային առաջարկները՝ մեկ թվով արտահայտված, հիմք ընդունելով տառերով գրվածը:

21.2.4. Հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

21.2.5. Հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին:

21.3. Առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում կամ եթե ոչ գնային պայմանները բավարարող հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկն գերազանցում են տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գնման հայտով սահմանված գինը՝

a. առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով Հանձնաժողովի նիստում առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ վարվում են միաժամանակյա բանակցություններ, եթե նիստին ներկա են բոլոր մասնակիցները (համապատասխան լիազորություն ունեցող ներկայացուցիչները),
b. հակառակ դեպքում Հանձնաժողովի նիստը կասեցվում է, և մեկ աշխատանքային օրվա ընթացքում Հանձնաժողովի քարտուղարը բավարար գնահատված բոլոր մասնակիցներին էլեկտրոնային ձևով միաժամանակ ծանուցում է գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին,
c. բանակցությունները վարվում են ոչ շուտ, քան ծանուցումն ուղարկվելու օրվան հաջորդող օրվանից երկրորդ և ոչ ուշ, քան տասներորդ աշխատանքային օրը,
d. յուրաքանչյուր մասնակցի՝ տվյալ պահին ներկայացրած գնային առաջարկը հրապարակվում է մյուս մասնակիցների համար, և մինչև բանակցությունների համար նախատեսված վերջնաժամկետի ավարտը մասնակիցը կարող է վերանայել իր գնային առաջարկը,

e. բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, ըստ մասնակիցների ներկայացրած գների, որոնց գինը չի գերազանցում այդ գնումը կատարելու համար հատկացված ֆինանսական միջոցների չափը, որոշվում ու հայտարարվում են առաջին և հաջորդական տեղերն զբաղեցրած մասնակիցները,

f. բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, եթե մասնակիցների ներկայացրած գները գերազանցում են տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների համար գնման հայտով սահմանված գինը, կամ նվազագույն գները հավասար են, գնման ընթացակարգն սույն Կանոնադրության 25.1.1 ենթակետի հիման վրա հայտարարվում է չկայացած:

21.4. Եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա Հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ Հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային նամակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

21.5. Եթե սույն Կանոնադրության 21.4 կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

21.6. Հայտերը բացվելուց հետո կազմվում է արձանագրություն, որը կցվում է գնման ընթացակարգի արձանագրությանը: Արձանագրությունն ստորագրում են Հանձնաժողովի նիստին ներկա անդամները: Արձանագրությունը պարունակում է՝

21.6.1. տեղեկություն՝ հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին,

21.6.2. հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները (անունները) և հասցեները,

21.6.3. տվյալներ՝ ծրարների կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին,

21.6.4. տվյալներ՝ բացված յուրաքանչյուր ծրարում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին,

21.6.5. տվյալներ՝ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին,

21.6.6. յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը,

21.6.7. տվյալներ՝ առաջին և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ,

21.6.8. գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու դեպքում՝ դրա հիմնավորումը,

21.6.9. տեղեկատվություն՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին,

21.6.10.Հանձնաժողովի հաջորդ նիստի վայրը, օրը և ժամը,

21.6.11.նիստին ներկա Հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները:

21.7. Եթե Հանձնաժողովի անդամը կամ մասնակիցը հայտերի բացման վերաբերյալ ցանկանում է արտահայտել հայտերի բացման նիստի արձանագրության մեջ չներառված կարծիք (հատուկ կարծիք), ապա դա ներկայացնում է գրավոր՝ նիստի ընթացքում, որը կցվում է արձանագրությանը:

21.8. Մասնակիցները և նրանց ներկայացուցիչները կարող են ներկա լինել Հանձնաժողովի նիստերին: Մասնակիցները կամ նրանց ներկայացուցիչները կարող են պահանջել Հանձնաժողովի նիստերի

արձանագրությունների պատճենները, որոնք տրամադրվում են մեկ օրացուցային օրվա ընթացքում: Պատվիրատուն պարտավոր է ապահովել մասնակիցների կողմից որպես գաղտնի նշված տեղեկությունների գաղտնիությունը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով պատասխանատվություն է կրում դրանց հրապարակման հետևանքով մասնակիցներին պատճառված վնասի համար, բացառությամբ օրենքով նախատեսված՝ պարտադիր հրապարակման ենթակա տեղեկությունների:

21.9. Հանձնաժողովի անդամը կամ քարտուղարը չի կարող մասնակցել Հանձնաժողովի աշխատանքներին, եթե հայտերի բացման նիստին պարզվում է, որ վերջիններիս կողմից հիմնադրված կամ բաժնեմաս (փայաբաժին) ունեցող կազմակերպությունը, կամ իրենց մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված անձը (ծնող, ամուսին, երեխա, եղբայր, քույր, ինչպես նաև ամուսնու ծնող, երեխա, եղբայր կամ քույր) կամ այդ անձի կողմից հիմնադրված կամ բաժնեմաս (փայաբաժին) ունեցող կազմակերպությունը տվյալ ընթացակարգին մասնակցելու համար ներկայացրել է հայտ:

21.10. Եթե առկա է սույն Կանոնադրության 21.9 կետով նախատեսված պայմանը, ապա հայտերի բացման նիստից անմիջապես հետո տվյալ ընթացակարգի առնչությամբ շահերի բախում ունեցող Հանձնաժողովի անդամը կամ քարտուղարը ինքնաբացարկ է հայտնում տվյալ ընթացակարգից: Հանձնաժողովի անդամները և քարտուղարը ստորագրում են շահերի բախման բացակայության մասին հայտարարություն:

22. Հայտերի գնահատում

22.1. Հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

22.2. Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է՝

22.2.1. բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով, կամ

22.2.2. այն մասնակցին ընտրելու մեթոդով, որի առաջարկած գնին և ոչ գնային չափանիշներին տրված գործակիցների հանրագումարը ամենաբարձրն է: Այս մեթոդի կիրառման դեպքում հայտերը գնահատելիս հրավերով սահմանած դեպքերում և կարգով, առաջարկվող գնից բացի, հաշվի են առնվում ոչ գնային այլ չափանիշներ: Ոչ գնային չափանիշները պետք է փոխկապակցված լինեն պայմանագրի առարկայի հետ և դրանց հարաբերական կշիռները ներկայացվեն հրավերի մեջ:

22.3. հայտում անհամապատասխանություն է տեղ գտել տառերով և թվերով գրված գումարների միջև, ապա հիմք է ընդունվում տառերով գրված գումարը: Եթե առաջարկվող գները ներկայացված են երկու կամ ավելի արժույթներով, ապա դրանք համեմատվում են Հայաստանի Հանրապետության դրամով՝ հրավերով սահմանված փոխարժեքով:

22.4. Հայտերի գնահատման արդյունքներով կազմվում է հայտերի գնահատման նիստի արձանագրություն, որը կցվում է գնման ընթացակարգի արձանագրությանը: Արձանագրությունը ստորագրում են Հանձնաժողովի նիստին ներկա անդամները:

22.5. Հայտերի գնահատման նիստի ավարտին հաջորդող առաջին աշխատանքային օրը նիստի արձանագրությունը հրապարակվում է տեղեկագրում: Պետական գաղտնիք պարունակող գնումների կատարման դեպքում սույն մասով նախատեսված արձանագրությունը հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող առաջին աշխատանքային օրն ուղարկվում է հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցներին:

22.6. Հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը Հանձնաժողովի քարտուղարը՝

22.6.1. հայտերի բացման նիստի արձանագրության բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը հրապարակում է տեղեկագրում,

22.6.2. իր և Հանձնաժողովի՝ հայտերի բացման նիստին ներկա անդամների կողմից ստորագրված շահերի բախման բացակայության մասին հայտարարությունների բնօրինակներից արտատպված (սկանավորված) տարբերակները հրապարակում է տեղեկագրում: Հանձնաժողովի այն անդամները, ովքեր Հանձնաժողովի աշխատանքներին մասնակցում են հայտերի բացման նիստից հետո հրավիրվող նիստերին, ստորագրում են սույն ենթակետում նախատեսված հայտարարությունները, որոնք տեղեկագրում քարտուղարը հրապարակում է ստորագրմանը հաջորդող աշխատանքային օրը,

22.6.3. էլեկտրոնային փոստի միջոցով Կոմիտե հարցում է ներկայացնում առաջին տեղը զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ Կոմիտեի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը,

22.6.4. էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն Կանոնադրությամբ նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն Կանոնադրության 18.5.7 ենթակետով նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում Հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

22.7. Կոմիտեն սույն Կանոնադրության 22.6.3 ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն:

Սույն կետով սահմանված ժամկետում Կոմիտեից տեղեկատվություն չստանալու դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե Կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ Կոմիտեի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում Հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից Կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից: Սույն կետով նախատեսված որակավորման չափանիշի

գնահատման ժամանակ հաշվի է առնվում սույն Կանոնադրության 11.9 ենթակետով նախատեսված ընթացակարգը:

22.8. Սույն Կանոնադրության 4.3.6 ենթակետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին: Սույն Կանոնադրության 22.7 կետով սահմանված՝ մասնակցության իրավունք չունենալու հիմքերի առկայության դեպքում սույն կետով նախատեսված տվյալները չեն ներկայացվում լիազորված մարմին, եթե մասնակիցը կամ Կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացրել է մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը:

22.9. Սույն Կանոնադրության 22.6.4 ենթակետով նախատեսված ժամկետի ավարտին հաջորդող աշխատանքային օրը քարտուղարն էլեկտրոնային եղանակով Հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները, գնահատման թերթիկների երկուական օրինակ և Կոմիտեից ստացված տեղեկատվությունը: Հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրվում է ոչ ուշ, քան փաստաթղթերը Հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Ընդ որում, ապրանքների գնման դեպքում Հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին, իսկ անհամապատասխանություն արձանագրելու դեպքում Հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

22.10. Առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ Կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն Կանոնադրության 22.5.1(7) ենթակետով նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում Հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

22.11. Առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

22.11.1. շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից,

22.11.2. չշտկելու դեպքում Հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

## 23. Պայմանագրի կնքում

23.1. Պայմանագիր կնքվում է Հանձնաժողովի որոշման հիման վրա՝ պատվիրատուի կողմից:

23.2. Մինչև պայմանագիր կնքելը պատվիրատուն տեղեկագրում հրապարակում է հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին ոչ ուշ, քան ընտրված մասնակցի մասին որոշման ընդունմանը հաջորդող առաջին աշխատանքային օրը: Պետական գաղտնիք պարունակող գնումների կատարման դեպքում սույն մասով նախատեսված հայտարարությունն ուղարկվում է հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցներին՝ ընտրված մասնակցի մասին որոշման ընդունմանը հաջորդող առաջին աշխատանքային օրը:

23.3. Պայմանագիր կնքելու մասին որոշումը պարունակում է ամփոփ տեղեկատվություն հայտերի գնահատման և ընտրված մասնակցի ընտրությունը հիմնավորող պատճառների մասին ու հայտարարություն անգործության ժամկետի վերաբերյալ: Անգործության ժամկետը պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվա և պատվիրատուի կողմից պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման օրվա միջև ընկած ժամանակահատվածն է:

23.4. Մրցույթի և էլեկտրոնային աճուրդի դեպքում անգործության ժամկետը առնվազն 10 օրացուցային օր է: Գնման այլ ընթացակարգերի համար անգործության ժամկետն առնվազն հինգ օրացուցային օր է:

23.5. Սույն Կանոնադրության 23.4 կետով նախատեսված անգործության ժամկետը կիրառելի չէ, եթե միայն մեկ մասնակից է հայտ ներկայացրել, որի հետ կնքվում է պայմանագիր:

23.6. Պատվիրատուն պայմանագիրը կնքում է, եթե սույն Կանոնադրության 23.4 կետով նախատեսված անգործության ժամկետում որևէ մասնակից գնումների բողոքարկման խորհրդում չի բողոքարկում պայմանագիր կնքելու մասին որոշումը: Մինչև անգործության ժամկետը լրանալը կամ առանց պայմանագիր կնքելու մասին հայտարարության հրապարակման կնքված պայմանագիրն առոչինչ է:

23.7. Պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

23.8. Պայմանագրի ապահովման չափը կազմում է պայմանագրի գնի 10 տոկոսը: Պայմանագրի ապահովումը ներկայացվում է ընտրված մասնակցի կողմից միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ փողի, կամ բանկային երաշխիքի ձևով: Կանխիկ փողի ձևով ներկայացված պայմանագրի ապահովումը պահվում է լիազոր մարմնի անվամբ բացված գանձապետական հաշվում:

23.9. Պայմանագրով պատվիրատուի կողմից կանխավճար հատկացվելու պայման նախատեսվելու դեպքում ընտրված մասնակիցը նախապես պատվիրատուին է ներկայացնում կանխավճարի ապահովում՝ կանխավճարի չափով, բանկային երաշխիքի ձևով: Կանխավճարի մարման կարգը սահմանվում է պայմանագրով:

23.10. Եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով, ապա պայմանագրի կամ կանխավճարի ապահովումը վերադարձվում է այն ներկայացնողին պայմանագրի կատարման ավարտից հետո՝ ոչ ուշ, քան հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

23.11. Գնման հետ կապված կողմերի՝ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ չկարգավորված հարաբերությունները կարգավորվում են պայմանագրով:

23.12. Սույն Կանոնադրության 23.4 կետով սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը: Ընդ որում, պայմանագիրը կարող է կնքվել ոչ շուտ, քան սույն Կանոնադրության 23.4 կետով սահմանված անգործության ժամկետը լրանալու օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը:

23.13. Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից: Պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում սույն կետով նախատեսված ժամկետը սահմանվում է 15 աշխատանքային օր:

23.14. Մինչև սույն Կանոնադրության 23.13 կետով նախատեսված ժամկետի ավարտը կողմերի համաձայնությամբ կարող են պայմանագրի նախագծում կատարվել փոփոխություններ, սակայն դրանք չեն կարող հանգեցնել գնման առարկայի բնութագրերի փոփոխմանը, ներառյալ՝ ընտրված մասնակցի առաջարկած գնի ավելացմանը:

23.15. Ընտրված մասնակցի կողմից պայմանագիրը չկնքելու (հրաժարվելու) կամ պայմանագիր կնքելու իրավունքից զրկվելու դեպքում Հանձնաժողովն ընտրված մասնակցին որոշելու նպատակով կիրառում է սույն Կանոնադրության 22.6-22.11 կետերով նախատեսված պայմանները:

23.16. Ընտրված մասնակցի հետ պայմանագիրը կնքվում է սույն Կանոնադրության և Օրենքով նախատեսված կարգով:

Ընդ որում, ապրանքների գնման դեպքում ապրանքի ամբողջական նկարագիրը պայմանագրում ներառվում է՝ համաձայն ընտրված մասնակցի կողմից սույն Կանոնադրության 22.6.4 ենթակետի համաձայն ներկայացված առաջարկի:

## 24. Պայմանագրի գինը

24.1. Պայմանագրի գինը կայուն է, եթե պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում, ապրանքները մատակարարվում և ծառայությունները մատուցվում են մինչև երեք տարվա ընթացքում: Եթե հրավերում և պայմանագրում նշված չէ, որ պայմանագրի գինը գործոնային է, ապա պայմանագրի գինը համարվում է կայուն՝ անկախ պայմանագրի կատարման ժամկետից:

24.2. Եթե պայմանագրի գինը կայուն է, ապա՝

24.2.1. մասնակցից չի կարող պահանջվել, որ նա ներկայացնի գնային առաջարկի հիմնավորումներ կամ որևէ այլ տիպի տեղեկություններ կամ փաստաթղթեր,

24.2.2. մասնակցի շահույթի չափը չի կարող հրավերով սահմանափակվել,

24.2.3. պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (ընտրված մասնակցի կամ պատվիրատուի) օգուտները (խնայողությունները) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են,

24.2.4. պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում պայմանագիր ստորագրած մասնակցի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Սույն ենթակետով նախատեսված գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է պատվիրատուի հետ պայմանագիր կնքած անձը:

24.3. Պայմանագրի գինը կարող է լինել գործոնային՝ այդ պայմանը հրավերով ու պայմանագրով նախատեսված լինելու դեպքում, եթե՝

24.3.1. պայմանագրով նախատեսված ապրանքները մատակարարվում, ծառայությունները մատուցվում և աշխատանքները կատարվում են պայմանագրի կնքման օրվանից երեք տարին գերազանցող ժամանակահատվածում՝ միայն երեք տարին գերազանցող ժամանակահատվածի համար պայմանագրով նախատեսված գների փոփոխության հնարավորությամբ,

24.3.2. Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած այլ դեպքերում:

24.4. Եթե պայմանագրի գինը գործոնային է, հրավերով նախատեսվում են՝

24.4.1. բոլոր այն պայմանները (այսուհետ՝ արտաքին գործոններ), որոնց փոփոխությամբ պայմանագրի գինը կարող է փոփոխվել,

24.4.2. արտաքին գործոնների փոփոխությամբ պայմանագրի գնի փոփոխման կարգը:

24.5. Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ծավալների կամ ձեռք բերվող գնման առարկաների միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման: Արհեստական են համարվում հետևյալ փոփոխությունները՝

24.5.1. պայմանագրի գնի անփոփոխ մնալու պայմանով՝ պայմանագրով նախատեսված ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ծավալների նվազեցումը կամ պայմանագրի գնի նվազեցման պայմանով՝ պայմանագրով նախատեսված ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ծավալների ոչ համամասնորեն նվազեցումը, որի արդյունքում ավելանում է գնման առարկայի միավորի ձեռքբերման գինը,

24.5.2. պայմանագրով նախատեսված աշխատանքների կամ ծառայությունների ծավալների ավելացումը, որը գերազանցում է պայմանագրի ընդհանուր գնի տասը տոկոսը: Պայմանագրով նախատեսված աշխատանքների կամ ծառայությունների ծավալները կարող են ավելանալ միայն պայմանագրով աշխատանքի կատարման կամ ծառայության մատուցման համար սահմանված ժամկետում,

24.5.3. պայմանագրով նախատեսված ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների փոխարինումն այլ բնութագրեր ունեցող ապրանքներով, աշխատանքներով կամ ծառայություններով, որոնք միասին գումարային արտահայտությամբ գերազանցում են պայմանագրի գնի տասնհինգ տոկոսը: Պայմանագրի գնի տասնհինգ տոկոսի շրջանակներում փոխարինումը կարող է կատարվել, եթե առկա է պատասխանատու ստորաբաժանման մասնագիտական եզրակացությունն այն մասին, որ փոխարինումը հանգեցնում է պայմանագրի արդյունավետ իրականացմանը,

24.5.4. պայմանագրով ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը մեկ անգամ՝ մինչև երեսուն օրացուցային օրվանից ավելի ժամկետով երկարաձգելը, բայց ոչ ավելի, քան պայմանագրով սահմանված ժամկետն է: Ընդ որում, սույն ենթակետում նախատեսված ժամկետը կարող է երկարաձգվել՝ մինչև պայմանագրով ի սկզբանե սահմանված ժամկետը լրանալը՝ պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը,

24.5.5. պայմանագրով նախատեսված ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների տեխնիկական բնութագրերի կամ նախագծային առաջադրանքների անփոփոխ մնալու պայմաններում պայմանագրի գնի ավելացումը:

## VII. Չկայացած գնումներ

### 25. Ընդհանուր դրույթներ .

25.1. Գնման ընթացակարգը չկայացած է հայտարարվում, եթե՝

25.1.1. հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին,

25.1.2. դադարում է գոյություն ունենալ գնման պահանջը,

25.1.3. ոչ մի հայտ չի ներկայացվել,

25.1.4. պայմանագիր չի կնքվում:

25.2. Գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելուց հետո արգելվում է բացել չբացված հայտերը, որոնք վերադարձվում են մասնակիցներին:

25.3. Գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելուն հաջորդող աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տեղեկագրում հրապարակում է հայտարարություն, որում նշվում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու հիմնավորումը: Փակ մրցույթի դեպքում սույն կետով նախատեսված հայտարարությունը չի հրապարակվում:

## VIII. Խորհրդատվական ծառայություններ ձեռք բերելու առանձնահատկությունները

26. Ընդհանուր դրույթներ.

26.1. Խորհրդատվական ծառայությունների ձեռքբերումն իրականացվում է բաց կամ փակ նպատակային մրցույթի ընթացակարգով՝ սույն Կանոնադրությամբ և Օրենքով նախատեսված կարգով:

26.2. Խորհրդատվական ծառայության բաց կամ փակ նպատակային մրցույթի ընթացակարգով գնման դեպքում խորհրդատուների ցուցակ կազմելու նպատակով, սույն Կանոնադրության 15.5.1. ենթակետի e պարբերությամբ նախատեսված ընթացակարգի համաձայն, կազմակերպվում է նախաորակավորման ընթացակարգ: Գնման գործընթացին հետագա մասնակցության իրավունք են ստանում նախաորակավորումն անցած մասնակիցները:

26.3. Ընտրված խորհրդատուն որոշվում է ներկայացված հայտերից՝ հրավերով նախատեսված՝

26.3.1. ոչ գնային պայմաններով առավել բարձր գնահատված կամ

26.3.2. ոչ գնային նվազագույն պայմաններին համապատասխանող գնահատված և ամենացածր գին առաջարկած կամ

26.3.3. առավելագույն՝ ֆիքսված գնի սահմաններում ոչ գնային պայմաններով առավել բարձր գնահատված առաջարկի ընտրության մեթոդով:

26.4. Ընտրված խորհրդատուն կարող է որոշվել նաև այն խորհրդատուին ընտրելու մեթոդով, որի առաջարկած գնին և աշխատանքային փորձին, աշխատակազմին, ծառայության մատուցման առաջարկվող կարգին կամ հրավերով սահմանված ոչ գնային այլ պայմանին (պայմաններին) հրավերով սահմանված կարգով տրված գործակիցների հանրագումարը ամենաբարձրն է:

26.5. Խորհրդատուի ընտրության կարգը, այդ թվում՝ խորհրդատուի ընտրության մեթոդի կիրառման պայմանները սահմանվում են հրավերով:

26.6. Ընտրված խորհրդատուի հետ կարող են վարվել բանակցություններ գնման պայմանագրի նախագծի դրույթների վերաբերյալ, սակայն դրանք չեն կարող հանգեցնել գնման առարկայի բնութագրերի փոփոխմանը:

26.7. Սույն Կանոնադրության 26.3.1 ենթակետով նախատեսված կարգով ընտրված՝ ոչ գնային պայմաններով առավել բարձր գնահատված խորհրդատուի հետ վարվող բանակցությունները կարող են հանգեցնել առաջարկված գնի նվազեցմանը կամ վճարման պայմանների փոփոխմանը:

## IX. Գնումների գործընթացի բողոքարկումը

27. Ընդհանուր դրույթներ.

27.1. Յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, Հանձնաժողովի և գնումների բողոքարկման խորհրդի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

27.2. Գնումների, այդ թվում՝ բողոքի քննման հետ կապված հարաբերությունները վարչական հարաբերություններ չեն, և դրանք կարգավորվում են քաղաքացիաիրավական հարաբերությունները կարգավորող ՀՀ օրենսդրությամբ:

27.3. Յուրաքանչյուր անձ իրավունք ունի՝

27.3.1. նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու պատվիրատուի և Հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները գնումների բողոքարկման խորհրդին,

27.3.2. դատական կարգով բողոքարկելու գնումների բողոքարկման խորհրդի, պատվիրատուի և Հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

27.4. Յուրաքանչյուր անձ, որը շահագրգռված է կոնկրետ գործարքի կնքման հարցում, և որը վնասներ է կրել պատվիրատուի, Հանձնաժողովի կամ գնումների բողոքարկման խորհրդի կատարած գործողության կամ անգործության հետևանքով, իրավունք ունի դատական կարգով պահանջելու վնասների փոխհատուցում:

Հավելված № 1
Գնումների իրականացման կարգի
մասին կանոնադրություն

Մասնակիցների՝ «Մասնակցության իրավունքը» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով.

1. Եթե մասնակիցը հայտով ներկայացրել է Կանոնադրության 4.3 կետով նախատեսված պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին գրավոր հայտարարություն, ապա տվյալ մասնակիցն իրավունք է ստանում մասնակցելու գնման ընթացակարգին:
2. Բացի հայտարարությունից, Կանոնադրության 4.3 կետով նախատեսված պահանջների հիմնավորման նպատակով մասնակցից, այդ թվում՝ ընտրված մասնակցից այլ փաստաթղթեր չեն կարող պահանջվել:

Հավելված № 2
Գնումների իրականացման կարգի
մասին կանոնադրություն

Մասնակիցների՝ «Մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը» չափանիշը սահմանվում և գնահատվում է նախաորակավորման ընթացակարգի կազմակերպման դեպքում հետևյալ կարգով.

1. Հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրած պայմանագրերի՝

| առարկան | պատվիրատուի և նրա հետ կապ հաստատելու տվյալները |
|---|---|
| Տարեթիվը՝ ........... թվական | |
| Տարեթիվը՝ ........... թվական | |

2. Մասնակիցը համարվում է սույն կետով նախատեսված պահանջը բավարարող, եթե հայտով ներկայացրել է պահանջվող տեղեկությունները:

Հավելված № 3
Գնումների իրականացման կարգի
մասին կանոնադրություն

Մասնակիցների՝ «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով.

1. Հրավերով պահանջվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնի հայտարարություն առ այն, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարիների ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (պայմանագրերը) գնահատվում է (գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը (հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից:
2. Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը, որպես սույն Հավելվածի 1 կետով սահմանված որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ, ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ-ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահա-տելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:
3. Եթե գնման առարկայի նախահաշվային գինը տվյալ ընթացակարգի շրջանակներում չի գերազանցում գնումների բազային միավորի հնգապատիկը, ապա սույն Հավելվածի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված պահանջները չեն սահմանվում հրավերով, և մասնակիցը հայտով ներկայացնում է միայն հայտարարություն համանման (նմանատիպ) պայմանագրի կատարման փորձառություն ունենալու մասին:
4. Մասնակցի որակավորումը գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն Հավելվածով նախատեսված պահանջները:

Հավելված № 4
Գնումների իրականացման կարգի
մասին կանոնադրություն

Մասնակիցների՝ «Տեխնիկական միջոցներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով.

1. Հրավերով պահանջվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնի հայտարարություն պայ-մանագրի կատարման համար անհրաժեշտ տեխնիկական միջոցների առկայության մասին:
2. Եթե հրավերով «Տեխնիկական միջոցներ» որակավորման չափանիշի մասով սահմանված են համապատասխան պահանջներ, ապա առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որպես սույն Հավելվածի 1-ին կետով սահմանված որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ ներկայացնում է այն տեխնիկական միջոցների տվյալները, որոնք վերջինս նախատեսում է օգտագործել պայմանագրի կատարման ժամանակ: Ընդ որում, տեխնիկական միջոցների առկայությունը հիմնավորելու համար առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը ներկայացնում է դրանց տեխնիկական անձնագրերի և այդ միջոցների նկատմամբ մասնակցի սեփականության կամ ժա-մանակավոր օգտագործման իրավունքը հաստատող փաստաթղթերի պատճենները:
3. Եթե գնման առարկայի նախահաշվային գինը տվյալ ընթացակարգի շրջանակներում չի գերազանցում գնումների բազային միավորի հնգապատիկը, ապա սույն Հավելվածի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված պահանջները չեն սահմանվում հրավերով, և մասնակիցը հայտով ներկայացնում է միայն հայտարարություն պայմանագրի կատարման համար անհրաժեշտ տեխնիկական միջոցների առկայության մասին:
4. Մասնակցի որակավորումը գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն Հավելվածով նախատեսված պահանջները:

Հավելված № 5
Գնումների իրականացման կարգի
մասին կանոնադրություն

Մասնակիցների՝ «Ֆինանսական միջոցներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով.

1. Հրավերով պահանջվում է, որ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցը, բացառությամբ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի, հայտով ներկայացնի հայտարարություն այն մասին, որ իր կողմից հայտը ներկայացվելուն նախորդող՝
   1.1. երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից,
   1.2. հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չի գերազանցել ակտիվների հաշվեկշռային արժեքը:
2. Եթե մասնակիցը չի հանդիսանում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ կամ գնման առարկայի նախահաշվային գինը տվյալ գնման ընթացակարգի շրջանակում չի գերազանցում գնումների բազային միավորի հնգապատիկը կամ գնման առարկա է հանդիսանում անշարժ գույքի ձեռքբերումը կամ մասնակիցն անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆի-զիկական անձ է, ապա սույն Հավելվածի 1-ին կետով նախատեսված պահանջը չի սահման-վում հրավերով, և մասնակիցը հայտով ներկայացնում է միայն հայտարարություն պայ-մանագրի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների առկայության մասին:
3. Մասնակցի որակավորումը գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն Հավելվածով նախատեսված պահանջները:

Հավելված № 6
Գնումների իրականացման կարգի
մասին կանոնադրություն

Մասնակիցների «Աշխատանքային ռեսուրսներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով.

1. Հրավերով պահանջվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնի հայտարարություն պայմանագրի կատարման համար անհրա-ժեշտ աշխատանքային ռեսուրսների առկայության մասին:
2. Եթե հրավերով «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշի մասով սահմանված են համապատասխան պահանջներ, ապա՝
   2.1. հրավերով պահանջվում է, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը, որպես սույն Հավելվածի 1-ին կետով սահմանված որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ, ներկայացնի պայմանագրի կատարման համար մասնակցի կողմից առաջարկվող աշ-խատակազմի վերաբերյալ տվյալները՝ հետևյալ ձևով՝

| Հիմնական աշխատակազմում ներառված մասնագետների տվյալներ | | | | |
|---|---|---|---|---|
| անունը, ազգանունը | որակավորումը | աշխատանքային փորձը | | գործատուի անվանումը |
| | | ժամանակահատվածը | գործունեության ոլորտը և կատարած աշխատանքը | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 1. | | | | |
| 2. | | | | |
| 3. | | | | |

   2.2. Աշխատանքային ռեսուրսների առկայու-թյունը հիմնավորելու համար առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը ներկայացնում է առաջադրված աշ-խատակազմում ներգրավված մասնա-գետների հաստատած գրավոր համաձայնությունները՝ իրականացվելիք աշխատանքներում վերջիններիս ներ-գրավվելու մասին, ինչպես նաև մասնա-գետների անձնագրերի և որակավորումը հավաստող փաստաթղթերի (դիպլոմ, վկայագիր, հավաստագիր և այլն) պատճենները:
3. Եթե գնման առարկայի նախահաշվային գինը չի գերազանցում գնումների բազային միավորի հնգապատիկը կամ գնման առարկան անշարժ գույք է, ապա սույն Հավելվածի 1-ին կետով նախատեսված պահանջը չի սահմանվում հրավերով, և մասնակիցը հայտով ներկայացնում է միայն հայտարարություն պայմանագրի կատարման համար անհրաժեշտ աշխատան-քային ռեսուրսների առկայության մասին:
4. Մասնակցի որակավորումը գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն Հավելվածով նախատեսված պահանջները: